Թեմատիկ պլանավորում

Հայ գրականություն - 10-րդ դասարան

Տարեկան՝ 102 ժամ

Շաբաթական՝ 3 ժամ

Դասագրքի հեղինակներ՝ Հենրիկ Բախչինյան,Սերգեյ Սարինյան՝2022թ

Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.20 11:10:11 AMST

Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Հայ գրականության սկզբնավորումը	-գաղափար հայ հին և միջնադարյան գրականության ընդհանուր առանձնահատկությունների մասին -Մեսրոպ Մաշտոցի գործի մեծության գիտակցում -գրերի գյուտի պատմաքաղաքական և մշակութային դերի ըմբռնում	- Ներկայացնել հայ հին և միջնադարյան գրականության ընդհանուր առանձնահատկությունները -ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կյանքի հիշարժան դրվագները -գնահատել Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում
Ժամ	**Էջ**	**Թեմա**
1/1	5	Հայ գրականության սկզբնավորումը
2/1	7	Գրերի գյուտը
2/2	8	Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Ոսկեդար	-հայրենասիրության և ազգի հարատևման գաղափարների՝որպես հայ գրականության հիմնական բովանդակության ըմբռնում - հետագա դարերում ստեղծված գիտական և գեղարվեստական գրականության զարգացման ընկալում	-ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնել 5-րդ դարի հայ մատենագիրներին և նրանց պատմությունները -բնութագրել գրականության հերոսներին, դատողություններ անել նրանց արարքների վերաբերյալ
Ժամ	**Էջ**	**Թեմա**
3/1	11	Ոսկեդար: 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը
3/2	13	Ագաթանգեղոս
3/3	15	Փավստոս Բուզանդ
3/4	16	Եղիշե

3/5	19	Ղազար Փարպեցի
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Մովսես Խորենացի	-Մովսես Խորենացու «Հայոց պատմության» դերի գիտակցում -առասպելների բովանդակության և գաղափարների իմացություն	-ներկայացնել Մովսես Խորենացու կյանքի հիշարժան դրվագները - ներկայացնել «Հայոց պատմություն» երկի դերը -արժևորել առասպելներում արծարծված գաղափարները -բնութագրել առասպելների հերոսներին, մեկնաբանել նրանց արարքները
Ժամ Թեմատիկ-2	**Էջ**	**Թեմա**
4/1	22	Մովսես Խորենացու կյանքը, ժամանակաշրջանը
4/2	23	«Հայոց պատմություն» երկի ընդհանուր բնութագիրը
4/3	23-24	Երկի պատվիրատուն և կառուցվածքը
4/4	24-25	Երկի գաղափարը
4/5	25-26	Երկի առանձնահատկությունները
4/6	26-28	Գրական արժեքը
4/7	29-31	«Ողբը»
4/8	31-32	«Հայկ և Բել»
4/9	33	«Վահագն վիշապաբաղ»
4/10	33-35	«Արտաշես և Արտավազդ»
		Թեմատիկ գրավոր աշխատանք 1
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
«Սասնա ծռեր»դյուցազներգությունը	-էպոսի դերի և նշանակության ընկալում -հայկական ժողովրդական էպոսը՝ որպես ժողովրդի համահավաք մտածողության, ձգտումների, երազանքների արտահայտության ընկալում	- ներկայացնել էպոսի՝ որպես գրական տեսակի առանձնահատկությունները -արժևորել դյուցազներգությունն ու նրանում արծարծված գաղափարները -բնութագրել դյուցազներգության հերոսներին, մեկնաբանել նրանց արարքները
Ժամ	**Էջ**	**Թեմա**
5/1	39	«Սասնա ծռեր» դյուցազներգությունը, ընդհանուր բնութագիր
5/2	39-40	Դյուցազներգության պատումները, կառուցվածքը
5/3	40-42	«Սանասար և Բաղդասար», «Մեծ Մեր»
5/4	42-44	«Սասունցի Դավիթ», «Փոքր Միհր»
5/5	44	Դյուցազներգության գաղափարաբանությունը

5/6	45	Գլխավոր հերոսները **Թեմատիկ գրավոր աշխատանք 2**
Թեմա Թեմատիկ-3	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
	-ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին -ընկալել հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական հատկանիշները: -գաղափար տալ միջնադարյան գրականության թեմատիկ բովանդակության մասին:	-կարողանալ կարդալ Նարեկացու տաղերը, վերաշարադրել դրանց բովանդակությունը -ցույց տալ տաղերի պատկերավորման միջոցները և մեկնաբանել -տարբերել տաղի առանձնահատկությունները -կարդալ, մեկնաբանել «Մատյան ողբերգության» աղոթամատյանից ընտրված հատվածը, մեկնաբանել հիմնական ասելիքը, կապել ամբողջ պոեմի գաղափարի հետ -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Թեմա**
6/1	52-54	Գրիգոր Նարեկացու կյանքը, գործունեությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
6/2	54-55	«Մեղեդի ծննդյան» տաղը, բովանդակությունը, պատկերային համակարգը
6/3	55-57	«Տաղ Վարդավառի» տաղի այլաբանական բովանդակությունը, բնության պատկերումը Նարեկացու տաղերում
6/4	57-59	«Մատյան ողբերգության» աղոթամատյանի կառուցվածքը, ժանրային առանձնահատկությունը
6/5,6	58-61	«Մատյան ողբերգության» աղոթամատյանի գաղափարական բովանդակությունը, գեղագիտական արժեքը
1		**Թեմատիկ գրավոր աշխատանք 3**
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
	-ծանոթացնել հայ միջնադարյան գրականության	-ներկայացնել հայ միջնադարյան

	ժանրային բազմազանությանը, գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին	գրականության հեղինակներին, տարբերակել միջնադարյան ժանրերը, հակիրճ բնորոշել դրանք -ցույց տալ միջնադարյան գրականության թեմատիկ առանձնահատկությունները
Ժամ.	**Էջ**	**Թեմա**
7/1,2	65-66	Հայ միջնադարյան գրականության հետագա ընթացքը և ընդհանուր բնութագիրը (հեղինակներ, ժանրեր, մոտիվներ)
Թեմա Թեմատիկ-4	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
	-ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանությանը, գաղափարական, գեղագիտական առանձնահատկություններին -գաղափար տալ միջնադարյան գրականության թեմատիկ բովանդակության մասին	-ներկայացնել առակի ժանրային հատկանիշները, հայ առակագիրների կենսագրության կարևոր դրվագները -կարդալ առակները և մեկնաբանել դրանց թեմատիկ առանձնահատկությունները -աշխատել բնագրի վրա, հանդես գալ լսարանի առաջ և մատչելի ու գրագետ ձևակերպել ասելիքը
Ժամ.	**Էջ**	**Թեմա**
8/1	67-69	Հայ առակագրության սկզբնավորումը. Մխիթար Գոշի կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը
8/2	70-71	Մխիթար Գոշի առակների թեմատիկ բաժանումն ու բովանդակությունը: «Արջ և մրջյուն», «Աստղերը» և «Ձկների թագավորը» առակները
8/3	72-73	Վարդան Այգեկցու կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը
8/4	74-76	Վարդան Այգեկցու առակները, թեմատիկ հատկանիշները, բովանդակությունը: «Իմաստուն զինվորը», «Այրի կինը և իշխանը», «Եզն ու ձին» առակները
		Թեմատիկ գրավոր աշխատանք 4
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
	-ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանու-	-ներկայացնել Ֆրիկի կյանքը, ստեղծագործության բնութագիրը -կարողանալ կարդալ Ֆրիկի «Ընդդեմ

	թյանը, գաղափարական, գեղագիտական առանձնա-հատկություններին -ընկալել հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական հատկանիշները	ֆալաքին», «Գանգատ» բանաստեղծությունները, վերաշարադրել դրանց բովանդակությունը և մեկնաբանել -ցույց տալ բանաստեղծությունների պատկերավորման միջոցները -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Դաս**
9/1	77-79	Ֆրիկի կյանքը, ստեղծագործության բնութագիրը
9/2	79-80	«Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծությունը
9/3,4	81-84	«Գանգատ» բանաստեղծությունը
		Թեմատիկ 5
	-ծանոթացնել հայ միջնադարյան գրականության ժանրային բազմազանու-թյանը, գաղափարական, գեղագիտական առանձնա-հատկություններին -ընկալել հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական հատկանիշները:	-ներկայացնել Քուչակի կյանքը, ստեղծագործության բնութագիրը -ցույց տալ հայրենի ժանրի առանձնահատկությունները -կարողանալ կարդալ Քուչակի հայրենները, վերաշարադրել դրանց բովանդակությունը և մեկնաբանել -կարողանալ անգիր արտասանել հայրեններից մի քանիսը -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Դաս**
10/1	85-86	Նահապետ Քուչակի կյանքը, ստեղծագործության բնութագիրը: Հայրենի ժանրը
10/2,3	87-89	Սիրային հայրեններ
10/4	90-92	
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
Սայաթ-Նովա	-ծանոթացնել Սայաթ-Նովայի կենսագրության կարևոր փաստերին -ընկալել հայ միջնադարյան քնարերգության գեղագիտական, տաղաչափական	- կարևորել Սայաթ-Նովայի դերը հայ միջնադարյան գրականության մեջ - կարողանալ կարդալ Սայաթ-Նովայի խաղերը, վերաշարադրել դրանց բովանդակությունը -ցույց տալ խաղերի պատկերավորման միջոցները և մեկնաբանել

	հատկանիշները -գաղափար տալ Սայաթ-Նովայի ստեղծագործու-թյունների թեմատիկ բովանդակության մասին	-տարբերել խաղերի թեմատիկ առանձնահատկությունները
Ժամ	**Էջ**	**Դաս**
11/1	93-95	Սայաթ-Նովայի կյանքը, գործունեությունը
11/1	95-96	Սայաթ-Նովայի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
11/1	96-98	Սիրո երգը
11/1	98-99	«Թամամ աշխար պըտուտ էկա» խաղը
11/1	99-100	«Դուն էն գլխեն իմաստուն իս» խաղը
11/1	100-101	<<Աշղարհումս ախ չիմ քաշի>>
Թեմա		
Հայ նոր գրականության զարգացման փուլերը	-գաղափար տալ հայ նոր գրականության սկզբնավորման, զարգացման ընդհանուր ընթացքի և նրա առանձին փուլերի մասին -ծանոթացնել տվյալ ժամանակաշրջանում գերիշխող գրական ուղղություններին, տարածված գրական ժանրերին	-իմանալ հայ նոր գրականության սկզբնավորման ու զարգացման պատմությունը, ճանաչել հեղինակներին -ճանաչել հայ գրականության մեջ ռոմանտիզմի, ռեալիզմի դրսևորման ձևերը -կարողանալ քննության ենթարկել հեղինակների ռոմանտիկական և ռեալիստական հայացքների դրսևորումները
Ժամ	**Էջ**	**Դաս**
12/1	105-109	Հայ նոր գրականության զարգացման փուլերը
12/2	110-114	Գրական ուղղություններ
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Խաչատուր Աբովյան	-ծանոթացնել Խաչատուր Աբովյանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ «Վերք Հայաստանի» վեպի, նրա գրության շարժառիթների, քննվող խնդիրների,	-կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը - ունենալ որոշակի գիտելիքներ վեպի գաղափարի, բերած նորության մասին - գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը

	պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին -ուսումնասիրել վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը	
Ժամ	**Էջ**	**Դաս**
13/1	115-117	Խաչատուր Աբովյանի կենսագրությունը
13/2	117-119	Խաչատուր Աբովյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
13/3	119-121	«Վերք Հայաստանի» վեպի Հառաջաբանը
13/4	121-123	Վեպի սյուժեն և կառուցվածքը
13/5	123-126	Վեպի գաղափարն ու կերպարները
13/6	126-129	Վիպական արվեստը
		Թոմատիկ 6
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
Միքայել Նալբանդյան	-ծանոթացնել Միքայել Նալբանդյանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ Նալբանդյանի հասարակական գործունեության և ստեղծագործական ժառանգության մասին -ուսումնասիրել ստեղծագործությունները, դրանց գաղափարն ու արծարծած խնդիրները	- ունենալ որոշակի գիտելիքներ Միքայել Նալբանդյանի կենսագրության, հասարակական գործունեության, գեղարվեստական ժառանգության վերաբերյալ -կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը - գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ	**Էջ**	**Դաս**
14/1	131-135	Միքայել Նալբանդյանի կյանքն ու ստեղծագործությունը
14/2	135-142	Միքայել Նալբանդյանի գեղարվեստական ժառանգությունը
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
Ռաֆֆու	-ծանոթացնել Ռաֆֆու	-կարդալ՝ ընկալելով կարդացածի

«Սամվել» պատմավեպը Թեմատիկ-7	կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ «Սամվել» պատմավեպի, նրա գրության շարժառիթների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին -ուսումնասիրել վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը	ենթատեքստը: -ունենալ որոշակի գիտելիքներ վեպի ժանրի մասին գրական ուղղություններից -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Դաս**
15/1	143-146	Ռաֆֆի, կյանքը, գործունեությունը
15/2	146-150	Ռաֆֆու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
15/3	150-151	«Սամվել» պատմավեպի պատմական հիմքը
15/4,5	152-154	Սյուժեն և բովանդակությունը, գաղափարը
15/6	154-156	«Սամվել» պատմավեպի կերպարները
15/7	154-156	«Սամվել» պատմավեպի կերպարները
15/8	154-156	Սամվելի կերպարը
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
«Գևորգ Մարզպետունի» պատմավեպը	-ծանոթացնել Մուրացանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի, նրա գրության շարժառիթների, պատկերվող դարաշրջանի, պատմական հիմքի մասին -ուսումնասիրել վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը	-կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը -ունենալ որոշակի գիտելիքներ վեպի ժանրի մասին գրական ուղղություններից -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Դաս**
16/1	191-192	Մուրացանի, կյանքը, գործունեությունը
16/2	192-196	Մուրացանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
16/3	196-198	Պատմագեղարվեստական երկերը
16/4	198-199	«Գևորգ Մարզպետունի» վեպը, գրելու շարժառիթն ու պատմական

		ժամանակաշրջանը
16/5	199-200	«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի սյուժեն և կառուցվածքը
16/6	200-205	«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի գաղափարն ու գլխավոր կերպարները
16/7	200-205	«Գևորգ Մարզպետունի» պատմավեպի մյուս կերպարներն ու արվեստը
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» երգիծական-մենագրական վեպը	-ծանոթացնել Պարոնյանի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ երգիծանքի և «Մեծապատիվ մուրացկանները» երգիծական վեպի մասին -ուսումնասիրել վեպի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին, գաղափարը	-կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը -ունենալ որոշակի գիտելիքներ երգիծանքի մասին, գրական ուղղություններից -գիտակցի հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը
Ժամ.	**Էջ**	**Դաս**
17/1	159-164	Պարոնյանի կյանքը, ստեղծագործությունը
17/2	165-167	«Մեծապատիվ մուրացկանները» երգիծական-մենագրական վեպի սյուժեն, կառուցվածքը և գաղափարը:
17/3	167-169	«Մեծապատիվ մուրացկանները» վեպի կերպարները. Աբիսողոմ աղայի կերպարը
17/4	169-173	
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունք**
Շիրվանզադեի «Քառս» վեպը և «Պատվի համար» դրաման	-ծանոթացնել Շիրվանզադեի կյանքին, նրա ստեղծագործության ընդհանուր բնութագրին -գաղափար տալ ռեալիզմի և դրամայի, նաև «Քառս» վեպի և «Պատվի համար» դրամայի մասին -ուսումնասիրել վեպի և դրամայի կառուցվածքը, սյուժեն, հերոսներին,	-կարողանալ կարդալ՝ ընկալելով կարդացածի ենթատեքստը -ունենալ որոշակի գիտելիքներ դրամայի ժանրի մասին գրական ուղղություններից: -գիտակցել հայ գրականության՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի, ազգային մտածողության և հոգեբանության բացահայտողի դերը

	գաղափարը	
Ժամ.	**Էջ**	**Դաս**
18/1	174-179	Շիրվանզադե, կյանքը, ստեղծագործությունը Ռեալիզմի առանձնահատկությունները.Շիրվանզադեի ռեալիզմը
18/2	180-183	Շիրվանզադեի «Քառս» վեպի սյուժեն, ներկայացված խնդիրները
18/3,4	183-186	Շիրվանզադեի «Քառս» վեպի կերպարները
18/5	186-189	Շիրվանզադեի «Քառս» վեպում ընտանիքի, կնոջ և բարոյականության խնդիրները
18/6	189-190	Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի սյուժեն և գաղափարը
18/7	189-190	Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի կերպարները
18/8		**Ամփոփում**

Դաս 1. Հայ գրականության սկզբնավորումը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Հին Հայաստանում մեսրոպյան գրերի ստեղծումից շատ դարեր առաջ ժողովրդական ի՞նչ ստեղծագործություններ են եղել:
2. Ո՞րն է հայ գրականության զարգացման առաջին շրջանը:
3. Հայ գրերի սկզբնավորումը ի՞նչ բախտորոշ իրադարձության հետ է առնչվում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Հին Հայաստանում մեսրոպյան գրերի ստեղծումից շատ դարեր առաջ հորինվել են Գողթան երգերը:

2. Հայ գրականության զարգացման առաջին շրջանը կոչվում է **հայ հին** կամ **հայ միջնադարյան** գրականություն:

3.Հայ գրերի սկզբնավորումը առնչվում է այնպիսի բախտորոշ իրադարձության հետ, ինչպիսին է ազգային գրերի գյուտը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել, որ վիպասքերը լայնորեն տարածված են եղել Գողթն գավառում:

2. Նշել, որ հայ գրականության զարգացման առաջին շրջանը սկսվում է V դարից:

3. Ներկայացնել, որ հայոց գրերն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Դաս 2. Գրերի գյուտը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է ստեղծել հայոց գրերը:

2. Ե՞րբ են ստեղծվել հայոց գրերը:

3. Ովքե՞ր են օժանդակել Մեսրոպ Մաշտոցին հայոց գրերը ստեղծելու գործում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայոց գրերն ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

2. Հայոց գրերն ստեղծվել են 405 թ.:

3. Հայոց գրերն ստեղծելու գործում Մեսրոպ Մաշտոցին օժանդակել են կաթողիկոս Սահակ Պարթևը և Վռամշապուհ արքան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել, թե ով է Մեսրոպ Մաշտոցը (հանճարեղ գիտնական, ուսուցիչ, գրող, թարգմանիչ):

2. Նշված թվականներից ընդգծել հայոց գրերի ստեղծման թվականը (405թ., 301թ.):

3. Թվարկել այն մարդկանց անունները, որոնք օգնել են Մեսրոպ Մաշտոցին հայոց գրերն ստեղծելու գործում:

Դաս 3. Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր գրքում են շարադրված Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործի մասին տեղեկությունները:

2. Որտե՞ղ է ծնվել Մեսրոպ Մաշտոցը:

3.Հարազատ ժողովրդից բացի՝ո՞ր ժողովուրդների համար է Մեսրոպ Մաշտոցը գիր ստեղծել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործի մասին տեղեկությունները շարադրված են Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքում:

2.Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Հացեկաց գյուղում:

3. Հարազատ ժողովրդից բացի՝ Մեսրոպ Մաշտոցը գիր է հորինել նաև հարևան վրացիների և աղվանների համար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ներկայացնել, թե ով է Կորյունը, ում մասին է գրել գիրքը:

2. Հակիրճ ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի կյանքը:

3. Թվարկել, թե որ ժողովուրդների համար է Մեսրոպ Մաշտոցը գրեր հորինել:

Դաս 4.Ոսկեդար: 5-րդ դարի հայ մատենագրության ընդհանուր բնութագիրը

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչո՞ւ էր 5-րդ դարը կոչվում ոսկեդար:

2. Ո՞ր գիրքն են անվանում «թարգմանությունների թագուհի»:

3. Ո՞րն է հայերեն թարգմանված առաջին նախադասությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրերի գյուտից անմիջապես հետո սկզբնավորվում է հայագիր գրականությունը և զարգանում արագ վերելքով: Ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում ստեղծվում են ինքնուրույն և թարգմանական բազմաթիվ երկեր:
2. «Թարգմանությունների թագուհի» համարվել է «Աստվածաշնչի» թարգմանությունը:
3. Մեսրոպյան տառերով առաջին նախադասությունն է. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել, թե 5-րդ դարում հայագիր գրականության զարգացման համար ինչ աշխատանքներ են կատարվում:
2. Ներկայացնել, որ «Աստվածաշնչի» թարգմանությանը ձեռնամուխ են լինում Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց մի քանի աշակերտների մասնակցությամբ:
3. Գրաբարով գրված նախադասությունը ներկայացնել ժամանակակից հայերենով («Ճանաչել իմաստություն և խրատ, իմանալ հանճարի խոսքերը»):

Դաս 5. Փավստոս Բուզանդ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է Փավստոս Բուզանդը, և ի՞նչ է նշանակում նրա անունը:
2. Ի՞նչ պատմական ժամանակաշրջան է ընդգրկում «Պատմություն հայոց» երկը:
3. Պատմիչը «Պատմություն հայոց» երկում ի՞նչն էր գնահատում և ի՞նչն էր դատապարտում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Փավստոս Բուզանդը 5-րդ դարի հայ պատմիչ է, Բուզանդ անունը գրական կեղծանուն է և նշանակում է «զրուցաբան»:
2. «Պատմություն հայոց» երկն ընդգրկում է պատմական մի ժամանակաշրջան, որն սկսվում է Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակի թագավորությունից և ավարտվում 387 թ. Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումով:
3. Պատմիչը ներկայացնում էր Մամիկոնյան սպարապետների հայրենանվեր սխրանքների, նշանավոր հոգևորականների վարք ու բարքի նկարագրությունները՝ չմոռանալով դատապարտել նաև հայ նախարարների անհատապաշտական, կենտրոնախույս ձգտումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել, որ Բուզանդ նշանակում է «զրուցաբան», «զրույցների մեկնիչ», և «Պատմությունը» առավելապես շարադրված է ժողովրդական զրույցների հիման վրա:
2. Նշել, որ պատմիչը դեպքերը շարադրում է իր լսած բանավոր պատմությունների՝ գլխավորապես «Պարսից պատերազմ» ավանդավեպի զրույցների հիման վրա:
3. Ներկայացնել «Արշակ և Շապուհ» հատվածի բովանդակությունը:

Դաս 6. Եղիշե Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞վ է Եղիշեն:
2. Ո՞րն է Եղիշեի գլխավոր երկը:
3. 5-րդ դարի ո՞ր ճակատամարտի ականատեսն ու մասնակիցն է դառնում Եղիշեն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Եղիշեն Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի առաջին աշակերտներից է:
2. Նրա գլխավոր երկը նվիրված է Վարդանանց պամությանը և կոչվում է «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի»:
3. Եղիշեն ծառայության է մտնում Վարդան Մամիկոնյանի մոտ՝ որպես հայոց զորաբանակի դպրապետ, դառնում է Ավարայրի ճակատամարտի ականատեսն ու մասնակիցը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Եղիշեի կյանքի կարևոր գրվագները:
2. Թվարկել՝ ինչ բնույթի ստեղծագործություններ է գրել Եղիշեն, ներկայացնել նրա մատյանը:
3. Ներկայանել, թե ինչպես է պատահել, որ Եղիշեն ի մոտոյ առնչվել է Վարդանանց ապստամբությանը:

Դաս 7. Մովսես Խորենացու կյանքը, ժամանակաշրջանը Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.

1. Ո՞վ է Մովսես Խորենացին:
2. Ի՞նչ պատվանուններով են մեծարել Խորենացուն:
3. Ո՞ր ստեղծագործությունն է համարվում Խորենացու մատենագրական վաստակի թագն ու պսակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մովսես Խորենացին 5-րդ դարի հայ պատմիչ է, Խորենացին եղել է Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրտսեր աշակերտներից:

2. Խորենացուն մեծարել են *Պատմահայր, Մեծն Մովսես, Քերթողահայր, Տիեզերահռչակ* և այլ պատվանուններով:

3. Խորենացու մատենագրական վաստակի թագն ու պսակն է «Հայոց պատմություն» երկը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել Մովսես Խորենացուն:

2. Թվարկել Մովսես Խորենացու պատվանունները:

3. Թվարկել Խորենացու ստեղծագործական աշխատանքները:

Դաս 8. Երկի պատվիրատուն և կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ւմ պատվերով է Խորենացին շարադրել «Հայոց պատմություն» երկը:
2. Քանի՞ մասից է բաղկացած Խորենացու «Հայոց պատմություն» երկը, և ինչպե՞ս են դրանք վերնագրված:
3. Ովքե՞ր են Խորենացու ամենասիրելի հերոսները, ինչո՞ւ է հենց նրանց նախընտրում պատմիչը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խորենացին «Հայոց պատմություն» երկը շարադրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով, որն արժանացել է արտակարգ մեծ գովեստի: Նա սուր քննադատության էր ենթարկում հայոց հին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքը, քանի որ հոգ չեն տարել, որ իրենց ժամանակն ու գործերը գրի առնվեն:
2. Խորենացու «Հայոց պատմություն» երկը բաղկացած է երեք մասից, որոնք կոչվում են գրքեր: Առաջին գիրքը կրում է «Հայոց մեծերի ծննդաբանությունը» վերնագիրը, երկրորդ գիրքը՝ «Միջին պատմություն մեր նախնիների», վերջին գիրքը՝ «Մեր հայրենիքի պատմության ավարտը» : Պատմությունն ավարտվում է «Ողբով» :
3. Խորենացու ամենասիրելի հերոսները անցյալից ընտրված քաջ ու կորովի առաջնորդներն են: «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ-Արամ-Տիգրան,- ասում է պատմիչը,- քանզի քաջերի սերունդները քաջերն են, իսկ նրանց միջև եղածներին ով ինչպես կամենում է, թող կոչի»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել, թե ում պատվերով է Խորենացին շարադրել «Հայոց պատմություն» երկը:
2. Ներկայացնել «Հայոց պատմություն» երկի կառուցվածքը:
3. Թվարկել Խորենացու ամենասիրելի հերոսներին:

Դաս 9. Երկի առանձնահատկությունները Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.

1. Խորենացու երկն ի՞նչ առանձնահատկություններով է աչքի ընկնում:
2. Քերթողահայրն իր աշխատությունը գրելիս ի՞նչ աղբյուրներից է օգտվել:
3. Ինչո՞ւ է երկը ձեռք բերել նաև միջազգային հնչեղություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկը հայ մատենագրության առաջին հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ ազգի կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
   Պաշտպանելով «առանց ժամանակագրության չկա ճշմարիտ պատմություն» սկզբունքը՝ Խորենացին աշխատում է հնարավորինս ճիշտ որոշել հայ թագավորների և հոգևոր անվանի առաջնորդների իշխանության տարիները:
2. Քերթողահայրն իր աշխատությունը գրելիս, բացի հայ հին բանահյուսական ստեղծագործություններից, օգտագործում է նաև բազմաթիվ և բազմալեզու գրավոր աղբյուրներ:
3. Երկը ձեռք է բերել նաև միջազգային հնչեղություն, քանի որ հեղինակը պատմական ուշագրավ տեղեկություններ է հայտնում նաև հարևան ժողովուրդների ու երկրների մասին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել երկի առանձնահատկություններից մի քանիսը:
2. Նշել, թե ինչ աղբյուրներից է օգտվել երկը գրելիս:
3. Հակիրճ ներկայացնել, թե ինչու է երկը ձեռք բերել նաև միջազգային հնչեղություն:

Դաս 10. «Ողբը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչո՞վ է եզրափակում Խորենացին պամությունը:
2. Ինչո՞ւ է ողբում պատմահայրը, ո՞րն էր պատճառը:
3. Ինչպիսի՞ն էին վարդապետները:
4. Ինչպիսի՞ն էին զինվորները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մովսես Խորենացու հայրենասիրության և ստեղծագործական մտքի փայլուն արտահայտություններից է «Ողբը», որը զետեղված է երկի վերջում՝որպես եզրափակիչ գլուխ: Սա մեզ հասած գրական ողբի հնագույն նմուշն է, որով սկզբնավորվում է միջնադարում լայն կիրառություն գտած ողբերգությունը:
2. Պատմիչը դառը կսկիծով է պատկերում իր երկրի թշվառ վիճակը. հայրենի գահից անարգաբար վտարված է թագավորը, եկեղեցին զրկվել է իր «քաջ հովվից», չկա ազգին առաջնորդելու ընդունակ գործիչ և այլն:
3. Վարդապետները ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, գայլ դարձած՝ գիշատում են իրենց հոտերը:
4. Զինվորները՝ անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակաբարո:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել երկի կառուցվածքը:
2. Հակիրճ ներկայացնել մի քանի պատճառ:
3. Վերլուծել հատվածը:
4. Սովորել հատվածը անգիր:

Դաս 11. «Վահագն վիշապաքաղ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար:

1. Ո՞վ է Վահագնը:
2. Ինչո՞ւ է Խորենացին Վահագնին կոչել Վիշապաքաղ:
3. Ինչպիսի՞ն է Վահագնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վահագնին Խորենացին համարում է պատմական անձնավորություն՝ասելով, թե նա Երվանդյան Տիգրան թագավորի որդին է: Բայց Վահագնը Հին Հայաստանում եղել է պաշտվող աստված: Նա ներկայացրել է ամպրոպի և կայծակի, քաջության և հաղթանակի աստվածությունը:
2. Պատմահայրը հայտնում է, թե նա կռվել է վիշապների դեմ ու հաղթել, այդ պատճառով էլ անվանել է նրան Վիշապաքաղ:
3. Երկնքի, երկրի, ծիրանի ծովի և այդ ծովի միջից ծուխ ու բոց ժայթքող երկունքից է ծնվում Վահագն աստվածը, նա կրակե մազեր ունի, բոցեղեն մորուք և արեգակնավառ աչքեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել, թե ով է Վահագնը՝ըստ Խորենացու:
2. Առասպելից ներկայացնել Վահագնի քաջագործություններից մի քանիսը:
3. Անգիր սովորել «Վահագնի» առասպելը:

Դաս 12. Դյուցազներգության պատումները, կառուցվածքը Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.

1. Ինչպե՞ս է ստեղծվել դյուցազնավեպը:
2. Ո՞վ է առաջին անգամ գրի առել էպոսը:
3. Քանի՞ ճյուղից է բաղկացած էպոսը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դյուցազնավեպը բանավոր եղանակով հյուսել ու վերապատմել են հայ վիպասացները: Նրանց ստեղծագործական երևակայությամբ այն շարունակ հղկվել, հարստացել է նորանոր դրվագներով և բազմաթիվ բանավոր տարբերակներով հասել նոր ժամանակներին:
2. Էպոսը վիպասաց Կրպոյից առաջին անգամ գրի է առել և «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով 1874 թ. Կ. Պոլսում հրատարակել է ականավոր բանահավաք Գարեգին Սրվանձտյանը:
3. «Սասնա ծռերը» բաղկացած է 4 ճյուղից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր գլխավոր հերոսը: Այդ ճյուղերը, ըստ գործող գլխավոր հերսների, կրում են «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր» վերնագրերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել, որ հայ ժողովրդական դյուցազնավեպը, որ բանավոր եղանակով հյուսել ու վերապատմել են հայ վիպասացները, ներկայանում է այլևայլ տարբերակների (պատումների) ձևով:
2. Ներկայացնել, որ Գարեգին Սրվանձտյանից բացի՝ Մանուկ Աբեղյանի և ուրիշների ջանքերով գրի են առնվել ու հրատարակվել վեպի այլ պատումներ:
3. Թվարկել էպոսի ճյուղերը՝ ըստ հերթականության:

Դաս 13. Դյուցազներգության գաղափարաբանությունը Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.

1. Ի՞նչ գաղափար է հաստատում դյուցազներգությունը:
2. Ինչո՞ւ է բանասացը էպոսի գլխավոր հերոսներից յուրաքանչյուրին կոչում Սասնա ծուռ:
3. Ինչպե՞ս է դյուցազներգության մեջ դրսևորվում ջրի պաշտամունքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայ դյուցազներգությունը հաստատում է անձնուրաց, անդուլ, հերոսական պայքարով ու հաղթանակով հայրենի երկրի ու ժողովրդի անկախությունը պահպանելու գաղափարը:
2. Բանասացը էպոսի գլխավոր հերոսներից յուրաքանչյուրին կոչում Սասնա ծուռ, այսինքն՝ ուղղամիտ, կամակոր, խենթի նման հանդուգն ու նպատակամետ կտրիճ:
3. Էպոսում հայոց հրաշագործ ջուրը այն հիմնական տարերքն է, որն իր զավակներին գերմարդկային ուժ է շնորհում, նրանց ծնողն է, նրանց կյանքի աղբյուրը: Հրաշագործ գետակի ակունքում են Սասնա հիմնադիր նախնիները կառուցում իրենց բերդը, քանի որ համոզված են, որ «Ով է դոր ականջ ուր խմե, կտրիճ կըլնի»: Սանասարը, այդ ջուրը խմելով, դյուցազնացավ: Ջրից ծնված հսկան ջրից է ստանում իր անխոցելի զենք ու զրահը, հասակն ու զորությունը, ջրից է ստանում նույնիսկ իր հրեղեն ձին՝Քուռկիկ Ջալալին: Էպոսի բոլոր գլխավոր հերոսները, Կաթնաղբյուրում լողանալով, հզորություն են ստանում, որը դիտվում է որպես հայրենի ջրի պաշտամունքի խորհրդանիշ՝ տոտեմ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել դյուցազներգության հիմնական գաղափարը:
2. Ներկայացնել, թե ինչու են հերոսները կոչվում ծուռ /բերել օրինակներ/:
3. Հակիրճ ներկայացնել ջրի պաշտամունքը էպոսի բոլոր ճյուղերում:

Դաս 14. Գլխավոր հերոսները _Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար.

1. Ի՞նչն է բնորոշ էպոսի բոլոր չորս ճյուղերի հերոսներին:
2. Ո՞վ է դյուցազներգության ամենասիրելի հերոսը:
3. Ովքե՞ր են էպոսի հերոսները:
4. Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Դավթի և Մելիքի միջև:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Էպոսի բոլոր չորս ճյուղերի հերոսներին բնորոշ են քաջությունը, կտրուկ գործելու վճռականությունը, միամտությունն ու անմիջականությունը, աշխատավոր մարդկանց բարին անելու հակումը, դյուցազնական ուժն ու խենթությունը:
2. Դավիթը դյուցազներգության ամենասիրելի հերոսն է: Նա ծնվել է Սասնա տան ճրագը վառ պահելու համար:
3. Էպոսի հերոսներն են Սասնա տան սերունդները՝ Սանասար, Բաղդասար, Վերգո, Ձենով Հովան, Մեծ Միհեր, Դավիթ, Փոքր Միհեր, Սասնա տան կանայք՝ Ծովինարը, Քառասուն-Ճյուղ-Ծամ Դեղձուն-Ծամ, Արմաղան, Խանդութ խանում, Գոհար: Էպոսի հերոսներից են Սասունի ոխերիմ թշնամիները՝ Բաղդադի խալիֆան, Մսրա Մելիքը և այլք:
4. Դավիթը իր նախնիների նման բարձրահասակ, գեղեցիկ, ազնիվ, խիզախ, ազատասեր, աներևակայելի ուժի տեր դյուցազուն է: Նա նենգ չէ և փոքրոգություն չի դրսևորում, մեծահոգի է: Հակառակ Դավթի՝ Մելիքը եսապաշտ է, փոքրոգի, ագահ, նենգ: Նա զուրկ է ասպետական արժանապատվությունից, վախկոտ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել էպոսի հերոսներին բնորոշ հատկանիշներից մի քանիսը:
2. Նկարագրել Դավթին՝ ներկայացնելով նրան բնորոշ հատկանիշները:
3. Թվարկել էպոսի հերոսներին՝ ըստ ճյուղերի:
4. Համեմատել Դավթի և Մսրա Մելիքի կերպարները:

Դաս 15. Գրիգոր Նարեկացու կյանքը, գործունեությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը։ Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել, ապրել և ստեղծագործել Նարեկացին։

2.Գրական ի՞նչ ժառանգություն է թողել Նարեկացին։

3. Ո՞ր ստեղծագործություններում է առավել վառ դրսևորվել բանաստեղծի հանճարը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրիգոր Նարեկացին ծնվել է մոտ 951թ. Մեծ Հայքի Ռշտունյաց գավառում, կրթություն է ստացել Վանա լճի ափին՝ Նարեկավանքում, որտեղ էլ ապրել, դասավանդել և ստեղծագործել է Նարեկացին։ Այստեղից էլ նրա Նարեկացի անունը։ Թաղված է Նարեկավանքի բակում։
2. Նարեկացուց մեզ են հասել մեկնություններ, տաղեր՝ «Մեղեդի ծննդյան», «Տաղ Վարդավառի», գանձեր և «Մատյան ողբերգության» պոեմ-աղոթամատյանը։
3. Նարեկացու բանաստեղծական հանճարը առավելապես դրսևորվել նրա գրած տաղերում և «Մատյան ողբերգության» պոեմում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Նարեկացու ծննդյան մոտավոր ժամանակաշրջանը, տեղը, Նարեկավանքում նրա կյանքը և գործունեությունը։
2. Թվարկել Նարեկացու ստեղծագործությունները՝ «Մեղեդի ծննդյան», «Տաղ Վարդավառի» տաղերը, «Մատյան ողբերգության» պոեմը։
3. Նշել, որ Նարեկացու բանաստեղծական հանճարը հատկապես դրսևորվել նրա գրած տաղերում և «Մատյան ողբերգության» պոեմում։

Դաս 16. «Մեղեդի ծննդյան» տաղը, բովանդակությունը, պատկերային համակարգը։

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է տաղը։

2. Ինչի՞ մասին է «Մեղեդի ծննդյան» տաղը։

3.Ո՞վ է տաղի քնարական հերոսուհին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տաղը հոգևոր երգի տեսակ է, որը ներկայացնում է կրոնական գաղափարներ և թեմաներ՝ Քրիստոսի ծնունդը, մկրտությունը, հայտնությունը, հարությունը, Աստվածամոր կերպարը։

2.Տաղում ներկայացվում է Մարիամ Աստվածածինը, փառաբանվում է Քրիստոսին ծնող սուրբ Մարիամը, նրա աստվածային գեղեցկությունը։ Տաղը այլաբանական բնույթ ունի.կրոնական ասելիքին զուգահեռ՝ Նարեկացին պատկերում է իրական կյանքի, բնության և մարդու գեղեցկությունը։ Սա նորություն էր հայ քնարերգության մեջ։

3. Տաղի հերոսուհին Աստվածամայրն է, որը պատկերվում է կենդանի և վառ գույներով և ավելի շատ երկրային կնոջ է նմանվում։ Կնոջ աչքերի, դեմքի գեղեցկությունը նկարագրվում է համեմատությունների և փոխաբերությունների միջոցով, նրա հագուստի վառ գույները նմանվում են բնության գույներին, կնոջ շարժուձևը նուրբ է և գեղանի, նրա ամեն քայլից լույս է կաթում։ Տաղն ավարտվում է Աստծո փառաբանությամբ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ բնորոշել տաղը, նշել հիմնական թեմաները։

2.Կարդալ տաղի աշխարհաբար տարբերակը, հակիրճ ներկայացնել տաղի հիմնական ասելիքը, պատկերները, բացահայտել տաղի այլաբանությունը։

3. Կարողանալ նկարագրել տաղի հերոսուհուն՝ Նարեկացու մի քանի պատկերավոր բնորոշումներ գործածելով. օրինակ՝ աչքերի գեղեցկությունը կամ այտերի կարմրությունը։

Դաս 17. «Տաղ Վարդավառի» տաղի այլաբանական բովանդակությունը, բնության պատկերումը Նարեկացու տաղերում

Թեմատիկ-3

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ տոն է պատկերված տաղում։

2.Ո՞րն է տաղի այլաբանական ասելիքը։

3. Ինչպե՞ս է պատկերում բնությունը Նարեկացին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տաղում պատկերված է Վարդավառը, որը քրիստոնեությունը վերափոխել և անվանել է Քրիստոսի պայծառակերպություն։ Ըստ Աստվածաշնչի՝ Քրիստոսը հայտնվում է Թաբոր լեռան վրա, Աստծո լույսով պարուրված՝ նա իջնում է լեռից։ Քրիստոսը պատկերվում է վարդի և շուշանի տեսքով։ Նարեկացին ևս իր տաղում այդպես է ներկայացնում Քրիստոսին։

2. Նարեկացին կրոնական գաղափարները ներկայացրել է բնության պատկերների միջոցով։ Տաղում գոհար վարդը Քրիստոսն է, որը լույս է առնում հայր աստծուց և հայտնվում մարդկանց Թաբոր լեռան գագաթին։ Նրա լույսով ողողվում է աշխարհը, լցվում սիրով։

3. Տաղը իրականում մի գեղեցիկ բնապատկեր է. արևի շողերը լուսավորում են բնությունը, ծառ ու ծաղիկ լցվում է աստվածային լույսով, մեղմ քամին օրորում է շուշանին, որը, շաղով լցված, շողշողում է արևի դիմաց։ Բնապատկերն ավարտվում է երեկոյան աստղազարդ երկնքի պատկերով և Աստծուն ուղղված փառաբանությամբ։ Փառաբանելով բնությունը՝ Նարեկացին փառաբանում է Աստծուն՝ որպես այդ ամենի արարչի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Կարդալ «Տաղ Վարդավառի» աշխարհաբար տարբերակը, ներկայացնել տաղի այլաբանական ասելիքը։

2.Ներկայացնել տաղի կրոնական ասելիքը, թեման։

3.Դասագրքում տրված հատվածներից մեկում ցույց տալ բնապատկերները և մեկնաբանել, թե ինչպես է Նարեկացին տեսնում և պատկերում բնությունը։

Դաս 18. «Մատյան ողբերգության» աղոթամատյանի կառուցվածքը, ժանրային առանձնահատկությունը։

Թեմատիկ-3

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ կառուցվածք ունի «Մատյան ողբերգության» աղոթամատյանը։

2.Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է։

3.Ժողովրդի մեջ ի՞նչ անունով է հայտնի այս գիրքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. «Մատյան ողբերգության» աղոթամատյանը կազմված է 95 գլխից, որոնք, բացառությամբ երկուսի, սկսվում են **«Սրտի խորքից խոսք Աստծո հետ»** խորագրով, այսինքն՝ անկեղծ զրույց Աստծո հետ։

2. «Մատյան ողբերգության» ընդունված է ասել, որ քնարական պոեմ է, որտեղ արտահայտված են քնարական հերոսի մտորումները, ապրումները, զգացմունքները, բայց իր բնույթով և կառուցվածքով այն ավելի շատ աղոթագիրք է, աղոթամատյան։ Միջնադարում կրոնական այսպիսի ստեղծագործությունները տարածված են եղել։

3.Ժողովրդի մեջ առավել հայտնի է եղել «Նարեկ» անունով և համարվել է հոգին և մարմինը բժշկող գիրք։ Նարեկը դրել են հիվանդ մարդու գլխի տակ կամ կարդացել են՝ հիվանդին բուժելու համար։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել «Մատյան ողբերգության» կառուցվածքը, բացատրել խորագիրը։

2.Հակիրճ բնորոշել Մատյանի ժանրային հատկանիշները։

3.Ներկայացնել Նարեկի ժողովրդականությունը։

Դաս 19. «Մատյան ողբերգության» աղոթամատյանի գաղափարական բովանդակությունը, գեղագիտական արժեքը: Թեմատիկ-3

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Գաղափարական ի՞նչ բովանդակություն ունի «Մատյան ողբերգության» աղոթամատյանը:

2.Մարդու փրկության ի՞նչ ճանապարհ է մատնանշում Նարեկացին:

3.Պատկերավորման ի՞նչ համակարգ ունի «Մատյան ողբերգության» աղոթամատյանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բովանդակության հիմնական գիծը մարդու կատարելության խնդիրն է, այն կապված է մեղքի և մեղավորության՝ քրիստոնեական ընկալման հետ, հոգու և մարմնի պայքարի հետ. մարդը թաղված է մեղքերի մեջ և, որպեսզի հասնի կատարելության, պետք է ապաշխարի և մաքրագործվի: Նարեկացին նաև փառաբանում է մարդուն՝ որպես բանական էակի, որին Աստված ստեղծել է իր պատկերով:

2. Նարեկացին իր վրա է վերցնում մարդկության մեղքերը, ինչպես Քրիստոսը, ապաշխարում, զղջում՝ հայցելով Աստծո բարեգթությունը, և փորձում ցույց տալ փրկության ճանապարհը: Նարեկացին մարդու փրկությունը տեսնում էր Աստծո հետ նրա միասնության, միաձուլման մեջ:

3. Նարեկացին հարստացրել է հայ քնարերգությունը. նա կիրառել է յուրօրինակ համեմատություններ, փոխաբերություններ, չափազանցություններ, հակադրություններ, մակդիրներ: Օրինակ՝ չափազանցությունները կիրառում է մարդու մեղքերի չափը ցույց տալու համար:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել աղոթամատյանի հիմնական ասելիքը, գաղափարը։ Ընտրված հատվածը ընթերցել, ցույց տալ հերոսի հոգու երկվությունը, մարդու մեղավորությունը և անկատարությունը։

2. Բացատրել մարդու փրկության ճանապարհը՝ ըստ այդ հատվածի։

3.Ընտրված հատվածում գտնել պատկերավորման 1-2 միջոց և մեկնաբանել դրանց կիրառման նպատակը։

Դաս 20. Հայ միջնադարյան գրականության հետագա ընթացքը և ընդհանուր բնութագիրը (հեղինակներ, ժանրեր, մոտիվներ)

Թեմատիկ-3

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Բովանդակային ի՞նչ փոփոխություններ է կրում հայ միջնադարյան գրականությունը, ի՞նչ թեմաներ և ժանրեր են ի հայտ գալիս։

2. Միջնադարում ի՞նչ հեղինակներ են ստեղծագործել։

3. Ի՞նչ ստեղծագործություններ են գրել միջնադարյան հեղինակները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. 12-րդ դարից սկսած՝ հայ գրականության մեջ նկատելի փոփոխություններ են կատարվում. շարունակում է զարգանալ պատմագրությունը, սկզբնավորվում են առակագրությունը, սիրերգությունը, աշուղական արվեստը։ Ի հայտ են գալիս նոր ժանրեր՝ առակը, հայրենը, զրույցը, խաղը։ Գրականության լեզուն գրաբարն ու միջին հայերենն էին։

2. Միջնադարյան հայտնի հեղինակներից են պատմագիրներ Կիրակոս Գանձակեցին, Առաքել Դավրիժեցին, առակագիրներ Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին, տաղերգուներից Կոնստանդին Երզնկացին, Մկրտիչ Նաղաշը, Հովհաննես Թլկուրանցին, սոցիալական բանաստեղծության հիմնադիր Ֆրիկը, հայրենների հեղինակ Նահապետ Քուչակը, աշուղական արվեստի հանճար Սայաթ-Նովան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել միջնադարյան գրականության հիմնական թեմաները։

2.Թվարկել հայտնի հեղինակներին և նրանց ստեղծագործական ժանրերը։

3. Միջնադարյան գրականության հայտնի հեղինակները գրել են պատմագրություններ, առակներ, տաղեր, սոցիալական բանաստեղծություններ և այլն։

Դաս 21. Հայ առակագրության սկզբնավորումը. Մխիթար Գոշի կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը

Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Մխիթար Գոշը, որտե՞ղ է ապրել, ստեղծագործել, ո՞ր վանքն է հիմնել։

2.Ի՞նչ ստեղծագործություններ է թողել Գոշը։

3.Ի՞նչ է առակը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գոշը ապրել և ստեղծագործել է 12-րդ դարում, ծնվել է Գանձակ քաղաքում, կրթությունը ստացել է Կիլիկյան Հայաստանում, հետո հաստատվել է Արևելյան Հայաստանի Գետիկ վանքում, երկրաշարժի հետևանքով ավերվել է Գետիկ վանքը, Գոշը Զաքարյան իշխանների աջակցությամբ վերաշինել է այդ վանքը և հարակից համայնքները։ Գոշի մահից հետո այդ վանական համալիրը կոչվել է Գոշի անունով՝ Գոշավանք (այժմ՝ ՀՀ Դիլիջան քաղաքի մոտ)։

2. Գոշից մեզ են հասել «Դատաստանագիրքը»՝ օրենքների ժողովածուն և առակների ժողովածուն։

3.Առակը բարոյախրատական բնույթի արձակ կամ չափածո ստեղծագործություն է, որտեղ այլաբանորեն ներկայացվում են մարդկային թերությունները և արատները։ Առակները գրվել են միջին հայերենով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Գոշի կյանքի և գործունեության մասին հիմնական տեղեկույթը։

2. Թվարկել Գոշի ստեղծագործությունները։

3.Հակիրճ բնորոշել առակը՝ որպես ժանր։

Դաս 22. Մխիթար Գոշի առակների թեմատիկ բաժանումն ու բովանդակությունը: «Արջ և մրջյուն», «Աստղերը» և «Ձկների թագավորը» առակները: Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ թեմատիկ բաժանում և բովանդակություն ունեն Գոշի առակները:

2. Ի՞նչ գաղափար է արտահայտվում «Արջ և մրջյուն» և «Ձկների թագավորը» առակներում:

3. Ո՞րն է «Աստղերը» առակի հիմնական ասելիքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գոշի առակներում հիմնականում պատկերվում էին տերերի և հպատակների հարաբերությունները, Գոշը կենտրոնացված միապետության գաղափարն էր արտահայտում իր առակների միջոցով: Գոշի առակները բաժանվում են 3 խմբի՝ բարոյական (բույսերի և կենդանիների բարքի մասին), առասպելական(գործող անձինք կենդանիներն են) և ստեղծական (հերոսները մարդիկ են):

2.«Արջ և մրջյուն» և «Ձկների թագավորը» առակների սյուժեն և գաղափարը, այն է՝ տերերը պետք է առաքինության և բարեմտության օրինակ ծառայեն, ոչ թե ոչնչացնեն իրենց հպատակներին:

3.«Աստղերը» առակի սյուժեն և բարոյախրատական ասելիքը, այն է՝ հպատակները չպետք է գերագնահատեն սեփական ուժերը և հնազանդ լինեն տերերին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել և բնորոշել Գոշի առակների դասակարգումը և թեմատիկ բովանդակությունը:

2. Կարդալ և վերապատմել «Արջ և մրջյուն» և «Ձկների թագավորը» առակների սյուժեն, դուրս բերել հիմնական գաղափարը:

3. Կարդալ և վերապատմել «Աստղերը» առակի սյուժեն, մեկնաբանել առակի բարոյախրատական ասելիքը:

Դաս 23. Վարդան Այգեկցու կյանքը, գործունեությունը, ստեղծագործությունը:

Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Վարդան Այգեկցին:

2. Որտե՞ղ է կրթություն ստացել և գործունեություն ծավալել Այգեկցին:

3. Ի՞նչ ստեղծագործություններ են մեզ հասել Այգեկցուց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այգեկցին ապրել է 12-13-րդ դարերում, ծնվել է Կիլիկիայի Տլուք գավառի Մարաթա բնակավայրում:
2. Կրթությունը ստացել է Կիլիկիայի Արքակաղին վանքում, ձեռնադրվել է վարդապետ և գործել է Այգեկ վանքում, այդտեղից էլ ստացել է Այգեկցի անունը:
3. Այգեկցուց մեզ են հասել ճառեր, խրատական թղթեր, առակներ: Նա նաև քարոզիչ է եղել և քարոզների վերջում առակներ է կցել՝ ավելի պատկերավոր և հասկանալի դարձնելու համար իր ասելիքը: Այգեկցու առակների գիրքը տպագրվել է 17-րդ դարում Ամստերդամում «Աղվեսագիրք» վերնագրով: Այգեկցին ևս ստեղծագործել է միջին հայերենով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Այգեկցու կյանքի հիմնական դրվագները:
2. Հակիրճ ներկայացնել, թե որտեղ է կրթություն ստացել և որտեղից է ստացել Այգեկցի անունը:
3. Թվարկել Այգեկցու գրական ժառանգությունը, նշել առակների ժողովածուի անունը:

Դաս 24.Վարդան Այգեկցու առակները, թեմատիկ հատկանիշները, բովանդակությունը: «Իմաստուն զինվորը», «Այրի կինը և իշխանը», «Եզն ու ձին» առակները:

[Թեմատիկ-4]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ թեմաներով են գրվել Այգեկցու առակները:

2.Գաղափարական ի՞նչ բովանդակություն ունի Այգեկցու «Իմաստուն զինվորը» առակը:

3.Ի՞նչ թեմայով են գրվել «Այրի կինը և իշխանը», «Եզն ու ձին» առակները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այգեկցու առակները ներկայացնում և քննադատում են մարդկանց եսամոլությունը, ագահությունը, ամբարտավանությունը և խղճմտանքի պակասը:

2.«Իմաստուն զինվորը» առակում գովաբանում է զինվորի խիզախությունն ու ոգու արիությունը:

3.«Այրի կինը և իշխանը» առակում նշավակում է իշխողների դաժանությունը և հասարակ ժողովրդի տառապանքը, «Եզն ու ձին» առակում ներկայացնում է, որ երկրի պահող և շենացնող ուժը հասարակ, աշխատավոր ժողովուրդն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել Այգեկցու առակների թեմատիկան:

2.Հակիրճ շարադրել տրված առակի սյուժեն և կարողանալ դուրս բերել բարոյախրատական ասելիքը:

3.Ներկայացնել այս առակների հիմնական բարոյախրատական միտքը:

Դաս 25. Ֆրիկի կյանքը, ստեղծագործության բնութագիրը

Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Պատմական ի՞նչ ժամանակաշրջանում է ապրել և ստեղծագործել Ֆրիկը։

2. Անձնական ի՞նչ ողբերգություն է ապրել Ֆրիկը։

3. Ի՞նչ ստեղծագործություններ են մեզ հասել Ֆրիկից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ֆրիկն ապրել է 13-րդ դարում՝ մոնղոլ-թաթարական տիրապետության ժամանակ։ Իսկական անունը հայտնի չէ, «ֆրիկ» բառը միջին հայերենով նշանակում է *դեռահաս ցորեն, ցորենի խանձված հասկ։*

2. Ֆրիկը եղել է հարուստ, ապահովված, ունեցել է ընտանիք, որդի, բայց մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակ կորցրել է ամեն ինչ, նույնիսկ հարկերի դիմաց գերի են տարել որդուն։ Նրա դաժան կյանքը արձագանք է գտել իր ստեղծագործություններում։

3.Ֆրիկը աշխարհիկ բանաստեղծ է, հոգևոր աստիճան չի ունեցել։ Նրանից մեզ են հասել կրոնական տաղեր, սոցիալական և անձնական բանաստեղծություններ։ Ֆրիկը հայ քնարերգության մեջ սկզբնավորել է անձնական և սոցիալական բողոքի թեմանները։ Ֆրիկը ստեղծագործել է միջին հայերենով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ պատմել, ներկայացնել Ֆրիկի ապրած ժամանակաշրջանը, բացատրել նրա անվան նշանակությունը։

2.Ներկայացնել Ֆրիկի անձնական ողբերգությունը թաթարական տիրապետության ժամանակ։

3.Թվարկել Ֆրիկի ստեղծագործությունների թեմաները, արժևորել նրա բերած նորությունները։

Դաս 26. Ֆրիկի «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծությունը

Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ թեմայով է գրված «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծությունը։

2.Ի՞նչ է ֆալաքը։

2.Ի՞նչ խնդիրներ է բարձրացնում Ֆրիկը այս բանաստեղծության մեջ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ֆրիկի «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծությունը բանավեճ է ֆալաքի՝ ճակատագրի հետ, Ֆրիկը ֆալաքին մեղադրում է մարդկանց նկատմամբ անարդար, անհավասար որոշումներ կայացնելու մեջ։ Ֆալաքը պատասխանում է Ֆրիկին, որ այդ ամենը Արարչի ձեռքում է, և նրա կամքով է կատարվում ամենը։ Ֆրիկը ֆալաքին անվանում է «կույր դատավոր», իսկ ֆալաքը Ֆրիկին կոչում է «անգետ հալևոր»։

2. Ֆալաքը, ըստ ժողովրդական պատկերացումների, չարխն է՝ ճակատագրի անիվը, որի պտույտով որոշվում է մարդկանց ճակատագիրը։

3. Ֆրիկը բողոքում է նաև հասարակության մեջ խավերի դասային և սոցիալական անհավասարության դեմ։ Նա քննադատում է կյանքի անարդարությունները, պաշտպանում ճնշվածներին, հարստահարվածներին։ Ֆրիկը ցավով խոսում է նաև մոնղոլական լծի դաժանության և հայ ժողովրդի տառապանքի մասին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության՝ դասագրքում եղած հատվածները, դուրս բերել հիմնական ասելիքը։

2.Մեկնաբանել և բացատրել *ֆալաք* բառը։

3.Կարդացած հատվածներում ցույց տալ դասային և սոցիալական անհավասարության դեմ բողոքը, մեկնաբանել ազգային խնդիրները։

Դաս 27. Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծությունը Թեմատիկ-4

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ինչի՞ դեմ է բողոքում Ֆրիկը այս բանաստեղծության մեջ, և ո՞ւմ է ուղղված իր գանգատը :

2.Ի՞նչ անհավասարություններ է տարբերակում Ֆրիկը:

2.Գեղարվեստական ի՞նչ միջոցներով է արտահայտում իր բողոքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ֆրիկը այս բանաստեղծության մեջ խտացրել է իր բողոքը մարդկանց անհավասարության և աշխարհի անարդար կարգի դեմ: Ֆրիկը իր գանգատն ուղղում է Աստծուն՝ նրան մեղադրելով այս անարդարությունների համար:

2.Այստեղ Ֆրիկը ներկայացնում է իրականության մեջ գոյություն ունեցող 3 անհավասարություն՝ ազգային, բնական և սոցիալական: Ազգային բողոքը մոնղոլների անօրինությունների և դաժանության դեմ է, բնական բողոքը մարդու կյանքի տևողության անհավասար բաշխման դեմ է, իսկ սոցիալական բողոքը ներկայացնում է դասային և տնտեսական անհավասարությունը:

3.Հակադրությունների միջոցով Ֆրիկը կարողանում է ցույց տալ մարդկանց միջև դասակարգային, սոցիալական անհավասարությունը, ընդվզում աշխարհի անարդար կարգի դեմ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծության՝ դասագրքում տրված հատվածները, ցույց տալ նրա բողոքը անարդար կարգի և աշխարհի անհավասար դրվածքի դեմ, ցույց տալ սոցիալական, բնական և ազգային անհավասարության դեմ Ֆրիկի բողոքն արտահայտող մտքերը և մեկնաբանել, թե այդ խնդիրները ինչքանով են արդի մեր օրերում:

2. Ցույց տալ սոցիալական, բնական և ազգային անհավասարության դեմ Ֆրիկի բողոքն արտահայտող մտքերը և մեկնաբանել, թե այդ խնդիրները ինչքանով են արդի մեր օրերում:

3.Ֆրիկի «Գանգատ» բանաստեղծության «Մեկն ի պապանց պարոնորդի» հատվածը կարդալ, բացատրել հիմնական միտքը, ցույց տալ, թե ինչպես է հակադրությունների միջոցով պատկերում կյանքի անարդարությունը և անհավասարությունը։

Դաս 28. Նահապետ Քուչակի կյանքը, ստեղծագործության բնութագիրը.հայրենի ժանրը

Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ի՞նչ է հայրենը։

2.Ո՞վ է Նահապետ Քուչակը։

3.Ի՞նչ է հայտնի նրա մասին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայրենը միջնադարյան բանաստեղծություն է, որը հորինել և երգել են միջնադարյան աշուղները։ Հայրենը 15-վանկանի 7/8-վանկանի կիսատողերով բանաստեղծություն է։ Հայրենները հիմնականում սիրային, պանդխտության և խոհական թեմաներով են գրվել։

2.Նահապետ Քուչակը ապրել և ստեղծագործել է 16-րդ դարում, եղել է աշուղ-բանաստեղծ, որին վերագրվել է հայրենների մեծ մասը։

3.Նրա մասին որոշ տեղեկություններ իմանում ենք իր իսկ հայրեններից, որ նա ծնվել է Վանի մոտակայքում՝ Խառակոնիս գյուղում, ապրել մոտ 100 տարի։ Նրա մասին պահպանվել են նաև ավանդազրույցներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել հայրենի ժանրի հիմնական հատկանիշները, ներկայացնել, թե ինչ թեմաներով են հիմնականում գրվել հայրենները։

2.Ներկայացնել, թե որ դարի հեղինակ է Քուչակը։

3.Հակիրճ պատմել Քուչակի մասին տեղեկությունները։

Դաս 29. Սիրային հայրեններ Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ինչպե՞ս է պատկերվում սերը հայրեններում։

2.Սիրային հայրեններում ինչպե՞ս է պատկերվում քնարական հերոսուհին։

3. Սիրահարված տղամարդու զգացմունքները ինչպե՞ս են արտահայտվում հայրեններում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայրեններում ազատ և անկաշկանդ պատկերվում և փառաբանվում է աշխարհիկ սերը, համարձակ ներկայացվում է սիրո ամենակուլ ուժը, գեղեցկությունը, տառապանքը, նաև սիրո վայելքը։ «Երբ սերն ի աշխարհն եկաւ» հայրենում պատկերում է սիրո ծնունդը, թե ինչ է զգում սիրահարված մարդը, ինչ ապրումներ և խոհեր է ունենում, սիրով է լցվում մարդը, և սերն է տարածվում աշխարհով մեկ։ Սերը երջանկության ակունքն է, մարդու գոյության իմաստը։ Հայրեններում դատապարտվում է վաճառված, շահով պայմանավորված սերը։

2.Սիրային հայրեններում պատկերվում է կինը՝ որպես սիրո և երջանկության առարկա։ Կնոջ արտաքին գեղեցկությունը ներկայացվում է բնության երևույթների միջոցով, պատկերվում է նաև կնոջ ներաշխարհը, կինը անկաշկանդ և լիարյուն արտահայտում է իր սերը, սակայն կինը նաև ամոթխած և հպարտ էակ է։

3. Կնոջ կերպարին զուգահեռ՝ ներկայացվում են նաև սիրահարված տղամարդու ապրումները։ Նա տառապում է առանց սիրած կնոջ, անկաշկանդ արտահայտում է իր կարոտը և բուռն սերը, առանց սիրուհու ապրելու կյանքի անիմաստ և գորշ լինելու մասին իր մտորումները։ Հայրեններում հաճախ ներկայացվում են աշխույժ և կենդանի երկխոսություններ երկու սիրահարների միջև, օրինակ՝ «Աղուր, քեզ բանիկ մ’ասեմ...» հայրենը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բառարանի օգնությամբ կարդալ 1-2 սիրային հայրեն, վերաշարադրել աշխարհաբարով, ցույց տալ, թե ինչպես է պատկերվում սերը։ Մեկ հայրեն աշակերտի կամ ուսուցչի ընտրությամբ սովորել անգիր։

2.Ներկայացնել 1-2 սիրային հայրենի բովանդակություն, ցույց տալ, հայրեններից վերցված պատկերներով, արտահայտություններով, համեմատություններով բնորոշել քնարական հերոսուհուն։

3.Ընտրված հայրեններում ցույց տալ սիրահարված հերոսի ապրումները, մեկնաբանել «Աղուր, քեզ բանիկ մ’ասեմ...» հայրենը:

Դաս 30. Պանդխտության հայրեններ Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1.Ինչո՞ւ են տարածված եղել պանդխտության հայրենները:

2.Ինչպե՞ս է պատկերվում հայ պանդուխտի հոգեվիճակը:

3.Ինչպե՞ս են պատկերվում սիրահար զույգերի ապրումները պանդխտության հայրեններում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայ հասարակության մեջ, սոցիալական, քաղաքական, պատմական իրողություններով պայմանավորված, ցավալի իրողություն էր պանդխտությունը. տղամարդիկ ստիպված էին օտար ափերում պանդխտել՝ կարոտելով ընտանիքին, հայրենիքին, սիրած կնոջը: Այս թեման լայնորեն արտահայտվել է հայրեններում:

2.«Ժամ-ժամ զիմ դարիպութին» հայրենում պատկերվում է օտարություն նետված պանդուխտը, նրա ծանր ու դառը ճակատագիրը: Հեռվում թողած ընտանիքի, հայրենի տան կարոտը տանջում է պանդուխտին (ուսուցչի ցանկությամբ կարող է այլ հայրեն ընտրվել):

3.«Կելնեմ, կու գնամ, մանկտիք» հայրենում պատկերվում են պանդխտության գնացող երիտասարդի զգացմունքները, թե նա ինչ է պատգամում իր սիրած կնոջ ճակատագրի համար: Հայրենում զգացվում են հերոսի հոգեկան ցավը և տառապանքը, երբ ստիպված պիտի բաժանվի սիրած կնոջից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել պանդխտության երևույթը, նրա առաջացման պատճառները:

2.Բառարանի օգնությամբ կարդալ հայրենը, վերաշարադրել բովանդակությունը աշխարհաբարով: Ցույց տալ պանդուխտի հոգեվիճակն ու ճակատագիրը ներկայացնող տողերը և մեկնաբանել: Արտահայտել կարծիք պանդխտության երևույթի արդիական լինելու պատճառների մասին:

3. Կարդալ հայրենը, վերաշարադրել բովանդակությունը, ցույց տալ հերոսի հոգեվիճակը։

Դաս 31. Սայաթ-Նովայի կենսագրությունը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Սայաթ-Նովան։
2. Ի՞նչ արհեստ է սովորել, և ի՞նչ արվեստ է նրան գրավել։
3. Որտե՞ղ է ապրել և որպես ի՞նչ է ծառայել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ծնվել է 1722 թվականին Թիֆլիս քաղաքում։

2. Սովորել է ջուլհակություն, բայց նրան գրավել է աշուղական արվեստը։

3. Ապրել է Հերակլ Երկրորդ թագավորի պալատում և եղել է պալատական երգիչ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Սայաթ-Նովայի ծննդավայրը, հիշատակել ծննդյան թվականը։

2. Ներկայացնել Սայաթ-Նովայի ուսումնառությունը ջուլհակի մոտ, սերն ու հետաքրքրությունը աշուղական երգի նկատմամբ։

3. 1-2 նախադասությամբ բնորոշել աշուղի կյանքը պալատում։

Դաս 32. Սայաթ-Նովայի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ մոտիվներով է ստեղծագործել Սայաթ-Նովան:

2. Ինչպե՞ս է իրեն կոչել:

3. Ինչպիսի՞ սեր է ներկայացնում հեղինակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ստեղծագործել է սիրո, խրատական և սոցիալական թեմաներով:

2. Իրեն կոչել է *խալխի նոքար*:

3. Ներկայացրել է կյանքում եղած *անմուրազ, անպատասխան* սերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել, թե տրված թեմաներից որոնցով է ստեղծագործել Սայաթ-Նովան.

ա) սիրային,

բ) սոցիալական,

գ) խրատական,

դ) հայրենասիրական:

2. Բացատրել, որ *խալխի նոքար* նշանակում է *ժողովրդի ծառա*: Մի քանի բառով բացատրել արտահայտության իմաստը:

3. Բացատրել, որ անպատասխան սերն է, որ այրում, փոթորկում է բանաստեղծի հոգին:

Դաս 33. Սայաթ-Նովայի սիրո երգերը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ինչի՞ երգիչ է համարվում Սայաթ-Նովան։

2. Ի՞նչ երազանք ունի բանաստեղծը։

3. Ինչպիսի՞ սեր է բանաստեղծի սերը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սայաթ-Նովան սիրո երգիչ է։

2. Սիրած յարի հետ խոսք ու զրույց անելու երազանք ունի։

3. Անհասանելի, դժբախտ սեր է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. 1-2 նախադասությամբ նշել, թե ինչ է *սիրո երգիչ* (գրել է սիրո մասին երգեր)։

2. Նկարագրել երգչի՝ սիրած յարի հետ զրուցելու երազանքը։

3. Թվարկել երգչի հոգեվիճակն արտահայտող 1-2 բառ, արտահայտություն բանաստեղծությունից (դաղ, կրակ, արին, արտասուքս արուն շինեցիր...)։

Դաս 34. «Թամամ աշխար պտուտ էկա» խաղը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ թեմայով է այս խաղը:

2. Ըստ բանաստեղծի՝ ինչպիսի՞ն է իր յարը:

3. Ինչի՞ հետ է համեմատում իր յարին Սայաթ-Նովան:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երգը սիրո թեմայով է:

2. Բանաստեղծի համար իր նազանի յարը գեղեցկուհիներից ամենագեղեցիկն է:

3. Բանաստեղծն իր յարին համեմատում է հրաշագեղ, անգնահատելի գանձի հետ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել երգի թեման:

2 1-2 նախադասությամբ բնորոշել հեղինակի սիրած յարին (Նրա սիրուն արժանացողը մշտապես ուրախ կլինի, մերժվածը՝ տրտում...):

3. Պատկերացում ունենալ համեմատության մասին. ընթերցել կամ արտասանել առնվազն 1 քառատող:

Դաս 35. «Դուն էն գլխեն իմաստուն իս» խաղը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ւմ է նվիրված այս խաղը:

2. Ի՞նչ թեմայով է գրված:

3. Ի՞նչ խորհուրդ է տալիս հեղինակն արքային:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երգը հասցեագրված է վրաց Հերակլ Երկրորդ արքային:

2. Խրատական բնույթի ստեղծագործություն է:

3. Գովաբանում է արքային, նաև աղերսում, որ հավատա իր անմեղությանը և չհավատա ուրիշների խոսքերին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել, որ երգն հասցեագրված է վրաց Հերակլ Երկրորդ արքային, որի պալատական երգիչն էր Սայաթ-Նովան:

2. 1-2 նախադասությամբ բնորոշել տաղի իմաստը (չհավատալ ուրիշների ասածներին և վստահել իր նվիրվածությանը):

3. Ընթերցել կամ արտասանել առնվազն 1 քառատող (օրինակ՝ 4-րդ տունը):

Դաս 36. «Աշխարս մե փանջարա է» խաղը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ե՞րբ է ստեղծվել խաղը, ի՞նչ իրադարձությունների հետ է կապված։

2. Ինչի՞ հետ է համեմատում աշխարհը։

3. Ինչպիսի՞ն է աշխարհն ըստ բանաստեղծի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երգն ստեղծվել է 1759 թվականին, երբ վերջին անգամ Սայաթ-Նովան վտարվում է պալատից։

2. Աշխարհը համեմատում է շրջանակով լուսամուտի հետ:

3. Աշխարհում ոչ մի բան կայուն չէ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել, որ այդ տարեթիվը կապված է երգչի՝ պալատից վտարվելու շրջանի հետ:

2. Պատկերացնել համեմատությունը և բերել ուրիշ օրինակ:

3. Թվարկել մի քանի միտք բանաստեղծությունից՝ *առավոտից երեկո ողջ կմնա, ճշմարտախոսությունը հալածված է, բազմապատկվել է բամբասանքն ու չարախոսությունը, բարեկամը դարձել է թշնամի*:

Դաս 37. Հայ նոր գրականության զարգացման փուլերը Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ե՞րբ է սկզբնավորվել հայ նոր գրականությունը:
2. Ի՞նչ խոշոր մշակութային իրադարձություններ են տեղի ունեցել:
3. Ո՞ր դպրոցներն են բացվել այս շրջանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայ նոր գրականության սկզբնավորումն սկսվել է 17-րդ դարի վերջից և 18-րդ դարի սկզբներին:

2. Խոշոր մշակութային իրադարձություն էր առաջին հայկական տպագրությունը 1512 թվականին, Մխիթարյան միաբանության գործունեությունը և այլն:

3. 19-րդ դարի կեսից Թիֆլիսում, Մոսկվայում, Էջմիածնում բացվում են հայկական առաջին դպրոցները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշատակել հայ նոր գրականության սկզբնավորման ժամանակաշրջանը:

2. Թվարկել մի քանի խոշոր մշակութային իրադարձություն՝ 1717 թվականից Մխիթարյան միաբանության գործունեությունը, 1512 թվականին Հակոբ Մեղապարտի շնորհիվ հայերեն տպագրության հիմնումը:

3. Բնորոշել կրթության զարգացումը, հիշատակել առաջին դպրոցների անվանումները, վայրը՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը և այլն:

Դաս 38. Գրական ուղղություններ Թեմատիկ -5

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որո՞նք են գրական ուղղությունները:

2. Ի՞նչ է ռոմանտիզմը:

3. Ի՞նչ է ռեալիզմը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրական ուղղությունները հիմնականում 3-ն են՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ:

2. Ռոմանտիզմը ստեղծագործական ազատությունն է, գրողի երազանքների, իդեալի արտահայտումը:

3. Ռեալիզմն իրականության ներկայացումն է այնպես, ինչպես կա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

2. Թվարկել գրական 3 ուղղությունների անվանումներն ըստ հաջորդականության՝ կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ:

2. Նշել ռոմատիզմի հատկանիշներից 1-2-ը (ռոմանտիկ գրողները հակադրվում են իրականությանը, ստեղծում իրենց իդեալ հերոսներին, ռոմանտիկական ստեղծագործությունները հաճախ արկածային բովանդակություն ունեն...):

3. Նշել ռեալիզմի հատկանիշներից 1-2-ը (ռեալիստական ստեղծագործությունների մեջ իրադարձություններն ու հերոսների արարքները պետք է համոզիչ, իրական ու ճշմարտացի լինեն):

Դաս 39. Խաչատուր Աբովյանի կենսագրությունը Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել Խաչատուր Աբովյանը:
2. Ի՞նչ կրթություն է ստացել:
3. Ի՞նչ գործունեություն է ծավալել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ծնվել է 1809 թվականին Քանաքեռ գյուղում:

2. Սովորել է Էջմիածնի վանքի դպրոցում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Դորպատի համալսարանում:

3. Աշխատել է որպես ուսուցիչ և տեսուչ Երևանի և Թիֆլիսի դպրոցներում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել ծննդյան թվականը և ծննդավայրը:

2. Թվարկել 1 կամ 2 ուսումնական հաստատություն (Էջմիածնի վանքի դպրոց, Թիֆլիսի Ներսիսյան դպրոց, Դորպատի համալսարան):

3. Նշել 1-2 ուսումնական հաստատություն, որտեղ աշխատել է (Թիֆլիսի գավառական դպրոց, Երևանի գավառական դպրոց):

Դաս 40. Խաչատուր Աբովյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը

Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ ունի Խաչատուր Աբովյանը։

2. Ի՞նչ պատմվածքներ ունի։

3. Չափածո ի՞նչ ստեղծագործություններ է գրել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աբովյանը գրել է համարյա բոլոր ժանրերով՝ վեպ, պատմվածք, բանաստեղծություն, առակ, ակնարկ և այլն։

2. Գրել է «Թուրքի աղջիկ», «Առաջին սեր» պատմվածքները։

3. Գրական առաջին փորձերը եղել են բանաստեղծություններ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել մի քանի տեսակներ՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպ։

2. Հակիրճ ներկայացնել պատմվածքների գաղափարը, որոնք սիրո, ազատության, մարդկային երջանկության մասին են։

3. Բնորոշել Աբովյանի քնարերգությունը, որոնք սիրո, բնության, հայրենասիրության, ազատության մասին են։

Դաս 41. «Վերք Հայաստանի» վեպի Հառաջաբանը Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ գիրք է «Վերք Հայաստանի» վեպը:
2. Առաջինը ո՞ր խնդիրն է լուծում հեղինակը:
3. Երկրորդը ո՞ր խնդիրն է:
4. Երրորդ խնդիրը ո՞րն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այս վեպը հայ նոր գրականության հիմնաքարն է:

2. Առաջինը լեզվի խնդիրն է, որ գրված ստեղծագործությունը ժողովրդին հասկանալի լեզվով լինի:

3. Երկրորդ խնդիրը բովանդակության խնդիրն է, որ ժողովրդին հոգեհարազատ թեմա լինի:

4. Երրորդ խնդիրը նոր հերոսի ընտրությունն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշել, որ հայ նոր գրականությունը սկզբնավորվել է Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպով:
2. Նշել, որ աշխարհաբարը փոխարինեց գրաբարին:
3. Բնորոշել, որ այստեղ սրտի բաներ էին, այսինքն՝ մարդկանց սրտին մոտ թեմաներ՝ ժողովրդի պատմությունն ու ներկան, իղձերն ու երազանքները:
4. Ներկայացնել, որ գլխավոր հերոսը հասարակ գյուղացի Աղասին էր:

Դաս 42. Վեպի սյուժեն և կառուցվածքը Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Քանի՞ մասից է բաղկացած վեպը:

2. Ինչպե՞ս է ավարտվում վեպը:

3. Ի՞նչ վերնագիր ունի վեպի հավելվածը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բաղկացած է 3 մասից՝

1) Բարեկենդանի տոնի նկարագրությամբ, Թագուհուն փախցնելու միջադեպի և Աղասու քաջագործության և փախուստի մասին:
2) Երևանի բերդի նկարագրությամբ, Աղասու և ընկերների արկածների մասին:
3) Երևանի բերդի գրավման, ռուս-պարսկական պատերազմի ավարտի մասին:

2. Վեպը ողբերգական ավարտ ունի, քանի որ մահանում են գլխավոր հերոսները:

3. Հավելվածը կոչվում է «Զանգի»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. 1-2 նախադասությամբ պատմել վեպի 3 մասերի սյուժեն:

1-ին մասում Թագուհուն առևանգելու եկած պարսիկ ֆարրաշներին թրատում է գլխավոր հերոս Աղասին, որի պատճառով հեռանում է գյուղից:

2-րդ մասում նկարագրվում են Աղասու և նրա ընկերների թափառումները և արկածները.

3-րդ մասը Երևանի բերդի գրավման և ռուս-պարսկական պատերազմի ավարտի մասին է:

2. Հիմնավորել ողբերգական ավարտի պատճառը (մահանում են Աղասին ու ընկերը, նրանց հայրերը):

3. Նշել, որ «Զանգի» հավելվածում նկարագրվում են հետագա իրադարձությունները, պատմվում է Աղասու կնոջ՝ Նազլուի մահը...:

Դաս 43. Վեպի գաղափարն ու կերպարները Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1.Ո՞րն է վեպի գաղափարը:

2.Ովքե՞ր են հերոսները:

3. Ո՞վ է գլխավոր հերոսը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վեպի գաղափարը հայրենասիրությունն է:

2. Հերոսները և՛ հասարակ մարդիկ են, և՛ պաշտոնյաներ: Աղասին է, նրա ընկեր Մոսին, տանուտեր Օհաննեսը, գեներալ Պասկևիչը և այլն:

3. Գլխավոր հերոսն Աղասին է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.1-2 նախադասությամբ ձևակերպել հեղինակի աներեր հավատարմությունը հայրենիքի ապագայի հանդեպ, իր ժողովրդին առաջադեմ աշխարհի կազմում տեսնելու բաղձանքը:

2. Թվարկել հերոսներից մի քանիսի անունները (Աղասին, նրա ընկեր Մոսին, տանուտեր Օհաննեսը, գեներալ Պասկևիչը և այլն) :

3. Բնորոշել Աղասուն մի քանի արտահայտությամբ՝ քաջ, վճռական, ընտանիքին նվիրված, հասարակ գյուղացի:

Դաս 44. Վիպական արվեստը Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ո՞ր լեզվով է գրվել վեպը։

2. Ի՞նչ կոչ է անում ընթերցողին։

3. Ո՞ր ստեղծագործության հետ կարելի է համեմատել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրվել է աշխարհաբարով՝ Արարատյան բարբառով։

2. Կոչ է անում ընթերցողին նվիրվել մայրենի լեզվին և երբեք չամաչել։

3. Վեպը համեմատվում է «Սասնա ծռեր» էպոսի հետ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշատակել Արարատյան բարբառի անվանումը, որով խոսում էր արևելահայության մեծ մասը։

2. Մեջբերել հեղինակի մտքից մի հատված՝ «Ֆրանցուզ, նեմեց, ինգլիզ որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞ պատիկ դու էլ պետք է սիրես ու գովես...»։

3. Փորձել ինքնուրույն կապ հաստատել վեպի և էպոսի իրադարձությունների կամ հերոսների միջև։

Դաս 45. Միքայել Նալբանդյանի կյանքն ու ստեղծագործությունը Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Որտե՞ղ է ծնվել և ի՞նչ մասնագիտություն է ունեցել Միքայել Նալբանդյանը:
2. Ո՞ւմ կողմից է հալածվել և ինչո՞ւ:
3. Հրապարակախոսական ի՞նչ երկեր ունի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ծնվել է Նոր Նախիջևանում, ունեցել է ուսուցչի մասնագիտություն:

2. Հալածվել է կաթողիկոս Ներսես Աշտարակեցու կողմից ազատական, հեղափոխական գաղափարներ ունենալու պատճառով:

3. Ունի մի շարք հրապարակախոսական երկեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել Միքայել Նալբանդյանի ծննդավայրն ու մասնագիտությունը:

2. Թվարկել հալածվելու 1-2 դեպք (Նոր Նախիջևանի քաղաքագլխի դեմ պայքարի համար է հալածվել, հեղափոխականների հետ կապ ունենալու համար բանտարկվել է և աքսորվել):

3. Թվարկել հրապարակախոսական ստեղծագործությունների մի քանի վերնագիր՝ «Երկու տող», «Հիշատակարան»:

Դաս 46. Գեղարվեստական ժառանգություն Թեմատիկ-6

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

1. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ է գրել Միքայել Նալբանդյանը:
2. Ինչի՞ մասին է «Մանկության օրեր» բանաստեղծությունը:
3. Ի՞նչի մասին է «Ապոլլոնին» բանաստեղծությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գրել է և՛ արձակ, և՛ չափածո ստեղծագործություններ:
2. «Մանկության օրեր» բանաստեղծությունը ազատության մասին է:
3. «Ապոլլոնին» բանաստեղծությունը ազատության գաղափարի շարունակությունն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել մի քանի ստեղծագործության վերնագիր՝ «Մեռելահարցուկ» վեպ, «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծություն և այլն:

2. Արտասանել 1-2 քառատող «Մանկության օրեր» բանաստեղծությունից:

3. Արտասանել 1-2 քառատող «Ապոլլոնին» բանաստեղծությունից:

Դաս 47. Րաֆֆու կյանքը և գործունեությունը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարաշրջանի հեղինակ է Րաֆֆին և որտե՞ղ է ծնվել։

2.Ի՞նչ էր Րաֆֆու իսկական անունը։

3.Ի՞նչ է նշանակում Րաֆֆու գրական կեղծանունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Րաֆֆին ապրել և ստեղծագործել է 19-րդ երկրորդ կեսին, ծնվել է Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում։

2.Րաֆֆու իսկական անունը Հակոբ Մելիք-Հակոբյան է։

3.Կան տարբեր վարկածներ.եբրայերենով նշանակում էուսուցչապետ, վարդապետ, նման անունով լեռ կա և այլն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Րաֆֆու ծննդյան մոտավոր ժամանակաշրջանը, տեղը։

2. Տարբերակել Րաֆֆու գրական կեղծանունը նիսկական անունը

3. Բացատրել Րաֆֆի անվան բացատրության վարկածներից մեկը։

Դաս 48. Ռաֆֆու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչ է Ռաֆֆին։

2. Ի՞նչ ժանրերի ստեղծագործություններ է գրել Ռաֆֆին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ռաֆֆին ռոմանտիզմի հետևորդ է։

2. Ռաֆֆին պատմավիպասանության հիմնադիրն է,Ռաֆֆին գրել է նաև ազգային-ազատագրական, պատմական և սոցիալական թեմաներով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել, թե տրված գրական որ ուղղության հետևորդն է Ռաֆֆին։

2. Թվարկել Ռաֆֆու առավել հայտնի մի քանի ստեղծագործություն՝ «Խենթը», «Սամվելը», «Խաչագողի հիշատակարանը»։

Դաս 49. «Սամվել» պատմավեպի պատմական հիմքը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարի դեպքերն են արտացոլված «Սամվել» պատմավեպում։

2. Ո՞ր պատմիչներից է օգտվել Ռաֆֆին «Սամվել» պատմավեպը գրելիս։

3. Պատմաքաղաքական ի՞նչ իրավիճակ էր Հայաստանում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմավեպում արտացոլված են 4-րդ դարի երկրորդ կեսի դեպքերը (Արշակունիների հարստության, Արշակ Երկրորդի գահակալության ժամանակահատվածը)։

2. Ռաֆֆին օգտվել է 5-րդ դարի պատմիչներ Մովսես Խորենացուց և Փավստոս Բուզանդից։

3. Հայաստանը ցանկանում էին նվաճել Պարսկաստանը և Բյուզանդիան, Հայաստանը երկարատև պատերազմի մեջ էր Պարսկաստանի հետ, Շապուհ արքան ուզում էր կրոնափոխ անել հայերին և վերացնել հայոց Արշակունիներին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել Արշակ Երկրորդի գահակալության մասին հակիրճ տեղեկույթ։

2. Նշել պատմիչների անունները։

3. Ներկայացնել 4-րդ դարի երկրորդ կեսին Հայաստանում ստեղծված պատմաքաղաքական վիճակի մեկ պատճառ։

Դաս 50. «Սամվել» պատմավեպի սյուժեն և բովանդակությունը, գաղափարը

Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ դեպքեր և իրադարձություններ են տեղի ունենում պատմավեպում:

2. Որտե՞ղ էին հայոցթագավորը և կաթողիկոսը:

3. Ինչպե՞ս էր Շապուհը ուզում նվաճել Հայաստանը:

4. Ի՞նչ են ձեռնարկում երկիրը փրկելու համար հայրենասեր ուժերը:

5. Ինչպե՞ս է ավարտվում վեպը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայաստանը քաղաքական ծանր վիճակում էր գտնվում. արտաքին և ներքին թշնամիները սպառնում էին ոչնչացնել հայոց թագավորությունը: Շապուհը երկարամյա պատերազմ էր մղում Հայաստանի դեմ: Հայ ժողովուրդը կանգնած էր կրոնափոխության և կործանման եզրին: Ներքին դավաճանական ուժերը օգնում էին Շապուհին: Հայրենասեր ուժերը փորձում էին կազմակերպել դիմադրություն: Ուժերի բախումների հետևանքով գլխավոր հերոսը՝ Սամվելը, սպանում է դավաճան հորը և ուրացող մորը:

2. Թագավորին՝ Արշակ Երկրորդին, և սպարապետ Վասակ Մամիկոնյանին Շապուհը խաբեությամբ կանչել էր Տիզբոն, բանտարկել էր Արշակին, իսկ սպարապետ Վասակ Մամիկոնյանին մորթազերծ էր արել:Հայոց կաթողիկոսը՝ Ներսես Մեծը, աքսորված էր Պատմոս կղզի: Այսինքն՝ երկիրը մնացել էր առանց գլխավոր ուժերի:

3. Պարսից թագավոր Շապուհը ձգտում էր նվաճելու և կրոնափոխ անելու հայ ժողովրդին: Ներքին դավաճանական ուժերը օգնում էին Շապուհին:

4. Հայրենասեր ուժերը փորձում էին կազմակերպել դիմադրություն:

5. Ուժերի բախումների հետևանքով գլխավոր հերոսը՝ Սամվելը, սպանում է դավաճան հորը և ուրացող մորը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրամաբանված հաջորդականությամբ դասավորել պատմավեպի սյուժեի հիմնական գործողությունները:

2. Նշել թագավորի և կաթողիկոսի անունները:

3.1-2 նախադասությամբ ներկայացնել Շապուհի քաղաքական նպատակները։

4. Համապատասխանեցնել գլխավոր հայրենասեր հերոսներին և նրանց կատարած հայրենափրկիչ գործողությունները։

5.Հակիրճ պատմել վեպի ավարտը։

Դաս 51. «Սամվել» պատմավեպի կերպարները Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ովքե՞ր են պատմավեպի գլխավոր կերպարները (հայրենասեր և դավաճան ուժեր)։

2. Ինչո՞ւ էին դավաճանել Սամվելի հայրը՝ Վահան Մամիկոնյանը, և Սամվելի քեռին՝ Մերուժան Արծրունին, Սամվելի մայրը՝ Տաճատուհին։

3. Ո՞վ էր հայոց թագուհին, և ինչպե՞ս է նա գերեվարվում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վեպի կերպարները բաժանվում են երկու խմբի՝ հայրենասեր և դավաճան ուժեր. հայրենասերներն էին Արշակ Երկրորդ թագավորը, Ներսես Մեծը, Վասակ Մամիկոնյանը, Փառանձեմ թագուհին, Մուշեղ Մամիկոնյանը, Սամվելը, Աշխենը, Արբակը, Հուսիկը։ Բացասական կերպարներն են դավաճաններ Վահան Մամիկոնյանը, Մերուժան Արծրունին, Տաճատուհին, Հայր Մարդպետը, Շապուհը՝ որպես թշնամի թագավոր։

2. Վահան Մամիկոնյանը դավաճանել էր, որ ստանա հայոց սպարապետի պաշտոնը, իսկ Մերուժան Արծրունուն Շապուհը խոստացել էր հայոց գահը և իր քրոջը՝ Որմիզդուխտին կնության տալ։ Տաճատուհին փառասեր էր, ուզում էր իր ամուսնուն տեսնել սպարապետ։ Այսինքն՝ դավաճանել էին՝ փառասիրությունից դրդված։

3. Հայոց թագուհին Փառանձեմն էր, որը ամրացել էր Արտազերս ամրոցում և չէր հանձնվում Շապուհին։ Մերուժան Արծրունին Հայր Մարդպետի մատնությամբ կարողանում է գրավել բերդը և գերեվարել Փառանձեմին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել գլխավոր կերպարները՝ տարբերակելով հայրենասեր և դավաճան ուժերին։

2. Բացատրել երկու գլխավոր նախարարների դավաճանության պատճառները՝ ըստ վեպից ընտրված հատվածների։

3. Մեկնաբանել թագուհու կերպարը՝ նշելով նրա քաջությունը, անկոտրում կամքը և հայրենասիրությունը։

Դաս 52. Սամվելի կերպարը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ էր Սամվելը ։

2. Ի՞նչն էր մտահոգում և ցավ պատճառում Սամվելին։

3.Ի՞նչ վճռական քայլերի դիմեց հանուն հայրենիքի փրկության. ինչո՞ւ սպանեց հորը և մորը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Սամվելը դավաճան Վահան Մամիկոնյանի որդին էր, որը, սակայն, չէր ընդունում հոր քաղաքական դիրքորոշումը և դավաճանությունը։

2.Սամվելի հայրը և քեռին դավաճան էին, ինքը կրում էր դավաճանի որդու խարանը։ Նա հայրենասեր էր և պատասխանատվություն էր կրում նրանց արարքների համար, մտածում էր, որ կհամոզի հորը և քեռուն հետ դառնալ այդ ամոթալի ուղուց։

3.Սամվելը, այնուամենայնիվ, չկարողացավ համոզել հորն ու քեռուն և դիմեց վճռական քայլի. սպանեց հորը։ Վեպի վերջին գլխում նա, չհանդուրժելով մոր պարսկասիրությունը և կրոնափոխ լինելը, սպանում է նաև նրան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Սամվելին՝ որպես գլխավոր հերոսի։

2. Բացատրել Սամվելի մտահոգության և հոգեկան ապրումների պատճառները՝ ըստ բնագրային տրված մեկ-երկու հատվածի (Սամվելի մտորումներից, Մուշեղի և Աշխենի հետ զրույցներից)։

3.2-3 նախադասությամբ պատմել Սամվելու քայլերը, պատճառաբանել Սամվելի արարքի հիմնավորվածությունը, ներկայացնել սեփական քննական մոտեցումը։

Դաս 53. Մուրացանի կյանքը և գործունեությունը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարաշրջանի հեղինակ է Մուրացանըև որտե՞ղ է ծնվել:

2. Ի՞նչ կրթություն է ստացել:

3. Ի՞նչպես է վաստակել իր ապրուստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

2. Մուրացանը ապրել և ստեղծագործել է 19-րդ դարի երկրորդ կեսին: Ծնվել է Արցախի Շուշի քաղաքում:

2.Մուրացանը կրթություն է ստացել Շուշիի թեմական դպրոցում:

3.Աշխատել է որպես հաշվապահ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Մուրացանի ծննդավայրը, հիշատակել ժամանակաշրջանը:

2. Ներկայացնել, որ Մուրացանն ուսումնասիրել է պատմություն, համաշխարհային գրականություն:

3. Բացատրել, որ Մուրացանի աշխատանքը անհրաժեշտ էր, քանի որ եկամտի այլ աղբյուր չուներ:

Դաս 54. Մուրացանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչ է Մուրացանը։

2. Ի՞նչ թեմաներով են Մուրացանի ստեղծագործությունները։

3. Ժամանակակից կյանքին նվիրված ի՞նչ ստեղծագործություններ է գրել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մուրացանը ռոմանտիզմի հետևորդ է։

2. Գրել է ժամանակակից կյանքի և պատմական թեմաներով։

3. Ժամանակակից կյանքին նվիրված ստեղծագործություններում անդրադառնում է քաղաքի և գյուղի կյանքին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

3. Ընտրել, թե տրված գրական ուղղություններից որի հետևորդն է Մուրացանը։

ա/ ռեալիզմ բ/ ռոմանտիզմ գ/սիմվոլիզմ։

2. Թվարկել Մուրացանի առավել հայտնի 1-2 ստեղծագործություններ՝ «Գևորգ Մարզպետունի», «Հասարակաց որդեգիրը»։

3. Թվարկել գյուղական կյանքին նվիրված առավել հայտնի ստեղծագործություններ՝ «Նոյի ագռավ», «Առաքյալը»։

Դաս 55. Մուրացանի պատմագեղարվեստական երկերը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Որո՞նք են պատմական թեմայով գրված գործերը։

2. Ովքե՞ր են գլխավոր հերոսները։

3. Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է «Ռուզանը»

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմական թեմայով գրված ստեղծագործություններից են «Ռուզանը» և «Անդրեաս երեցը»։

2. Գլխավոր հերոսներն են Ռուզանը և Արդրեաս երեցը։

3. «Ռուզան»-ը պատմական դրամա է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

4. Թվարկել պատմական թեմաներով գրված ստեղծագործություններից 1-2-ը։

5. Նշել գլխավոր հերոսների անունները։

6. Նշել, թե որ ժանրն է համապատասխանում «Ռուզան»-ին։

ա/ վեպ, բ/ բանաստեղծություն, գ/ դրամա։

Դաս 56.«Գևորգ Մարզպետունի» վեպը, գրելու շարժառիթն ու պատմական ժամանակաշրջանը, սյուժեն և կառուցվածքը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարի և ո՞ր իրադարձություններն են պատճառ դարձել վեպի ստեղծման համար:

2. Ի՞նչ դեպքեր և իրադարձություններ են տեղի ունենում պատմավեպում:

3. Ո՞ր պատմիչներից է օգտվել հեղինակը:

4. Ի՞նչ կառուցվածք ունի վեպը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

4. 19-րդ դարի վերջին Հայաստանի արևելյան հատվածին սպառնում էր ռուսական ցարիզմի ազգաձուլման քաղաքականությունը, իսկ արևմտյան հատվածին սպառնում էր սուլթան Համիդի ազգային բնաջնջման վտանգը:

5. Վեպում նկարագրվող իրադարձությունները տեղի են ունեցել 10-րդ դարում, հայ ժողովրդի պայքարն է արաբական բռնատիրության դեմ:

3. Հեղինակն օգտվել է Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու գրքերից:

4. Վեպը 3 մասից է բաղկացած:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

2. Հակիրճ ներկայացնել պատմական իրավիճակը, հայ ժողովրդի վիճակը ռուսական և սուլթանհամիդյան ճնշումների տակ:

2 Ներկայացնել վեպում պատմական իրադարձությունները, հայ ժողովրդի պայքարը արաբական բռնատիրության դեմ:

6. Նշել պատմիչներին:

7. Տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնել սյուժեի զարգացումները: Առաջին մասը թագավորի պարտության, գահից հեռանալու և Գևորգ Մարզպետունու հաշտարար ջանքերի մասին է, երկրորդ մասը արաբական ավերածությունների, Մարզպետունու վճռական քայլերի ու պայքարի մասին է, երրորդ մասը Աշոտ Երկաթի և Աբաս արքաեղբոր հաշտության, գահին սպառնացող վերջին վտանգների վերացման, Աշոտ Երկաթի և Մարզպետունու վախճանի մասին է:

Դաս 57. «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի գաղափարն ու կերպարները

Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

3. Ո՞րն է վեպի հիմնական գաղափարը:

4. Ո՞վ էր հայոց թագավորը, ի՞նչ առաքինություններ և ի՞նչ թերություններ ուներ:

3. Ո՞վ էր Գևորգ Մարզպետունին, ինչպե՞ս է փորձում պահպանել հայրենիքի ամրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վեպի գաղափարը հայրենասիրությունն է, որն արտացոլված է գլխավոր հերոս Մարզպետունու խոսքերի և արաքների միջոցով:

2. Հայոց թագավորը Աշոտ Երկաթն էր, որը վեպում ներկայացված է որպես հայրենասեր ու քաջ թագավոր: Պետության շահերից ելնելով՝ ամուսնանում է Գարդմանքի իշխան Սահակ Սևադայի դուստր Սահականույշի հետ, սակայն շարունակում է սիրել և կապ պահպանել Սևորդյաց օրիորդ Ասպրամի հետ, որն արդեն Ուտիքի տեր Ցլիկ Ամրամի կինն էր: Արդյունքում իշխանները, չհանդուրժելով անձնական վիրավորանքը, ապստամբում են թագավորի դեմ: Խարխլվում են երկրի ամրության հիմքերը:

3. Գևորգի միայն անունն է պատմական, որն իր փոքրաթիվ քաջերով մարտնչել է Բեշիրի հսկայական զորքի դեմ: Մուրացանը ստեղծել հայրենիքի փրկության իր իդեալական կերպարը, որն անմնացորդ նվիրվում է հայրենիքի փրկությանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

3. Բերել մեկ-երկու բնորոշ օրինակ Մարզպետունու խոսքերից կամ արարքներից:

4. Բացատրել թագավորի և իշխանների հակամարտության պատճառները: Ներկայացնել իր վերաբերմունքը՝ բերելով 1-2 փաստ:

3. Մեկնաբանել Մարզպետունուկերպարը՝ նշելով նրա քաջությունը, անկոտրում կամքը և հայրենասիրությունը:

Դաս 58. Մյուս կերպարները և վեպի արվեստը Թեմատիկ-7

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ էր թագուհին:

2. Ովքե՞ր էին Սահակ Սևադան և Ցլիկ Ամրամը:

3. Որո՞նք են վեպի գեղարվեստական ակնառու հատկանիշները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թագուհին Սահականույշն էր, որի արժանապատվությունը վիրավորված էր թագավորի դավաճանությունից, սակայն վճռական պահին նա կարողանում է հայրենիքի շահը վեր դասել անձնականից և գնալ Սևան ու համոզել թագավորին:

2. Սահակ Սևադան Սահականույշի հայրն էր, նրան և որդուն կուրացրել էր Աշոտ Երկաթը, իսկ Ցլիկ Ամրամը Ասպրամի ամուսինն էր: Երկուսն էլ ապստամբել էին թագավորի դեմ, չէին ուզում դավաճաններ համարվել, նաև չէին կարողանում հաղթահարել վիրավորված տղամարդկային արժանապատվությունը:

3. Վեպը կառուցված է երկխոսությունների միջոցով, նաև բնորոշ վերնագրերով, որոնց միջոցով ընթերցողն ավելի մոտիկից է ճանաչում հերոսների հոգեվիճակը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Սահականույշին, ցույց տալ նրա պահվածքի փոփոխության պատճառներից 1-2-ը:

2. Նկարագրել Սահակ Սևադայի անձնական վիշտը, Ցլիկ Ամրամի տղամարդկային խոցված արժանապատվությունից բխող գործողությունները և դրանց հետևանքները:

3. Բերել մի քանի վերնագրի օրինակ («Մի ծաղկով գարուն», «Կույր աչքը կներե, կույր սիրտը չի ների»):

Դաս 59. Հակոբ Պարոնյանի կյանքը և ստեղծագործությունը Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարաշրջանի հեղինակ է Պարոնյանը։

2. Ի՞նչ ժանրի ստեղծագործություններ է գրել Պարոնյանը։

3. Ի՞նչ է երգիծանքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պարոնյանը ապրել և ստեղծագործել է 19-րդ երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում՝ Կ.Պոլսում։

2. Պարոնյանը հայ մեծ երգիծաբան է, գրող, հրատարակիչ և հրապարակախոս. գրել է կատակերգություններ՝«Ատամնաբույժն արևելյան», «Պաղտասար աղբար», երգիծական վեպ՝ «Մեծապատիվ մուրացկանները», դիմանկարների շարք՝ «Ազգային ջոջեր»։

3. Երգիծանքը կյանքն արտացոլելու և պատկերելու միջոց է, հեղինակը ծաղրում է մարդկային արատները, թերությունները, հասարակական խնդիրներ է ներկայացնում երգիծանքով. ճշմարտությունը ավելի ցայտուն է, երբ ներկայացվում է ծաղրով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ (1-2 նախադասությամբ) ներկայացնել Պարոնյանի ապրած դարաշրջանի, Պոլսի հայ հասարակության խնդիրների վերաբերյալ տեղեկույթը։

2.Թվարկել կամ տրված շարքերից առանձնացնել Պարոնյանի ստեղծագործությունները։ Կարողանալ վեպից ընտրված մի հատվածի միջոցով բացատրել, թե ինչ է ծաղրում հեղինակը և ինչպես է դա անում։

3. Վեպից ընտրված մի հատվածում ցույց տալ երգիծանքի կիրառումը և բացատրի, թե ինչն է ծաղրում հեղինակը և ինչու։ Բացահայտել երգիծանքով ասված դառը ճշմարտությունը, մարդկային թերությունները։

Դաս 60.«Մեծապատիվ մուրացկանները» երգիծական-մենագրական վեպի սյուժեն, կառուցվածքը և գաղափարը: Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ կառուցվածք և սյուժե ունի «Մեծապատիվ մուրացկանները» վեպը:

2. Ո՞րն է վեպի գաղափարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.«Մեծապատիվ մուրացկանները» վեպի առանցքում Աբիսողոմ աղան է, իսկ մյուս հերոսները գալիս, հանդիպում են նրան՝ դրանով իսկ բացահայտելով թե՛ իրենց նպատակները, թե՛ իրենց մարդկային նկարագիրը և ճակատագիրը:

2.Վեպի գաղափարը ներկայացված է վերջում. հեղինակը անողոքաբար ծաղրում է Աբիսողոմ աղայի՝ որպես ազգային մեծատունի անտարբերությունը ազգային մշակույթի, գրականության և ընդհանրապես ազգային խնդիրների նկատմամբ, նաև ցավով երգիծում սոցիալական ծանր կացության մեջ հայտնված մտավորականներին՝ «գրական մարդոց»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Հակիրճ վերաշարադրել, պատմել Աբիսողոմ աղայի և մուրացկաններից մեկի հանդիպումը, այդ հատվածի միջոցով ցույց տալ և մեկնաբանել հեղինակի նպատակը և վեպի ասելիքը:

2. Կարդալ վեպի այն հատվածը (հատվածը կա դասագրքում), որտեղ ներկայացված է հեղինակի նպատակը և վեպի գաղափարը: Այդ հատվածում ցույց տալ և բացատրել հեղինակի նպատակը և վեպի գաղափարը:

Դաս 61.«Մեծապատիվ մուրացկանները» վեպի կերպարները. Աբիսողոմ աղայի կերպարը

Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ է Աբիսողոմ աղան։

2. Ինչպե՞ս է Պարոնյանը ներկայացնում նրա արտաքին և ներքին հատկանիշները։

3.Ի՞նչն է ծաղրում նրա կերպարում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Աբիսողոմ աղան հարուստ ազարակատեր էր, որը եկել էր Կ.Պոլիս՝ ամուսնանալու նպատակով։

2. Աբիսողոմ աղան ապուշի դեմքով, տգետ, բայց շատ փառասեր մեծահարուստ էր. նա իր տգիտության պատճառով ծիծաղելի իրավիճակներում է հայտնվում, օրինակ՝ չգիտի՝ ինչ է մուսան, ինչ է ընկալագիրը։

3. Աբիսողոմ աղային բացարձակ չեն հետաքրքրում «մեծապատիվ մուրացկանների» խնդիրները, նա ուզում է միայն իր անունը փառավորվի և հայտնի դառնա։ Հեղինակը ծաղրի միջոցով բացահայտում է կերպարը և քննադատում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել (2-3 նախադասությամբ) Աբիսողոմ աղայի մասին կարևոր տեղեկույթը։

2.Տրված հատվածում բնութագրել Աբիսողոմ աղային, մեկնաբանել, թե նրա արտաքինը ինչպես է ծաղրում, ինչպես է բացահայտում նրա էությունը, մտածելակերպը, աշխարհայացքը։

3. Ցույց տալ տրված հատվածում Աբիսողոմ աղային տգիտությունը և փառասիրությունը։

Դաս 62.Մեծապատիվ մուրացկանների կերպարը Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ովքե՞ր են մեծապատիվ մուրացկանները։

2.Ի՞նչը և ինչո՞ւ է ծաղրում նրանց Պարոնյանը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.«Մեծապատիվ մուրացկանները» հիմնականում մտավորականներն են՝ խմբագիրը, բանաստեղծը, դերասանը, բժիշկը, մանկավարժը, նաև սոցիալական տարբեր աստիճանների վրա գտնվող մարդիկ՝ բեռնակիրներ, սափրիչ, միջնորդ կին։

2. Բոլորը մուրացկանություն էին անում իրենց օրվա ապրուստը վաստակելու, գոյությունը ապահովելու համար։ Պարոնյանը ցավում է, որ մտավորականները հայտնվել են սոցիալական այսպիսի ծանր պայմաններում.

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված հատվածում բնութագրել Աբիսողոմ աղային, մեկնաբանի, թե նրա արտաքինը ինչպես է ծաղրում, ինչպես է բացահայտում նրա էությունը, մտածելակերպը, աշխարհայացքը։ Հստակ ցույց տա տրված հատվածում Աբիսողոմ աղայի տգիտությունը և փառասիրությունը։

2. Ընտրված երկխոսական հատվածում (խմբագիր-Աբիսողոմ աղա, բանաստեղծ-Աբիսողոմ աղա, Շուշան- Աբիսողոմ աղա) ցույց տալ մուրացկանների՝ Աբիսողոմ աղայից փող մուրալու դրդապատճառները, բացահայտել այն նվաստացուցիչ քայլերը, որ անում էին մուրացկանները։ Ներկայացնել 1-2 նախադասությամբ իր վերաբերմունքը այս հերոսների նկատմամբ և հիմնավորել (դատապարտո՞ւմ է, արդարացնո՞ւմ է, քննադատո՞ւմ է)։

Դաս 63. Շիրվանզադե, կյանքը, ստեղծագործությունը Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր դարաշրջանի հեղինակ է Շիրվանզադեն.որտե՞ղ է ծնվելև մահացել։

2. Ի՞նչ էր Շիրվանզադեի իսկական անունը։

3. Ի՞նչ է նշանակում Շիրվանզադե գրական կեղծանունը։

4. Ի՞նչ հատկանիշներ ունի ռեալիզմը՝ որպես գրական ուղղություն։

5. Ի՞նչ ժանրերի ստեղծագործություններ ունի Շիրվանզադեն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շիրվանզադեն ապրել և ստեղծագործել է 19-րդ վերջերինև 20-րդ դարի 1-ին կեսին, ծնվել է Շամախիում, մահացել է Կիսլովոդսում։

2.Շիրվանզադեի իսկական անունը Ալեքսանդր Մովսիսյան է։

3. Շիրվանզադեի կեղծանունը բացատրվում է Շիրվանի (այդպես էր գավառի անունը, որտեղ գտնվում էր Շամախին) զադե՝ որդի։ Մեկ այլ բացատրությամբ շիրվան նշանակում է դերձակ, զադե՝ որդի, բառացի՝ դերձակի որդի։

4. Ռեալիզմը կյանքը ճշմարտացիորեն պատկերելու գեղարվեստական ուղղություն և միջոց է։ Ռեալիզմի նշանաբանն է՝ կյանքը ինչպես որ է։ Շիրվանզադեն համարվում է հոգեբանական ռեալիզմի հիմնադիրը հայ գրականության մեջ։

5. Շիրվանզադեն գրել է վեպեր՝ «Նամուս»,«Ցավագար», «Քառս», պատմվածքներ՝ «Արտիստը», դրամաներ՝ «Պատվի համար» ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հակիրճ ներկայացնել Շիրվանզադեի ծննդյան մոտավոր ժամանակաշրջանը, տեղը, նաև մահվան տեղը։

2. Տարբերակել Շիրվանզադեի գրական կեղծանունը և իսկական անունը

3. Ներկայացնել և բացատրել Շիրվանզադեի անվան բացատրության վարկածներից մեկը։

4. Ներկայացնել ռեալիզմի մեկ-երկու հատկանիշ նշել կամ ընտրել տրված բնորոշումներից։

5. Ճանաչել Շիրվանզադեի մի քանի հայտնի գործեր՝ «Քառս», «Արտիստը», «Պատվի համար» դրամա և այլն։

Դաս 64. Շիրվանզադեի «Քառս» վեպի սյուժեն, ներկայացված խնդիրները

Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ինչպե՞ս է հղացել իր վեպը Շիրվանզադեն, արդյոք իրակա՞ն պատմություն է ընկած վեպի հիմքում ։

2. Վեպի դեպքերը որտե՞ղ են տեղի ունենում, ի՞նչ միջավայր է հեղինակը ներկայացրել։

3. Ինչի՞ շուրջ է ծագում վեպի բախումը՝ կոնֆլիկտը։

4. Ինչպե՞ս է լուծվում վեպի բախումը՝ կոնֆլիկտը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Շիրվանզադեն վեպի շուրջ մտածել է 15 տարի, վեպի սյուժեի հիմքում ընկած է իրական պատմություն՝ Բաքվի մեծահարուստ հանքատիրոջ ընտանիքում կտակի շուրջ ծագած խռովություն։

2. Վեպի դեպքերը տեղի են ունենում Բաքվում, հեղինակը պատկերում է սոցիալական տարբեր խավեր՝ մեծահարուստ միլիոնատերեր, ոսկի երիտասարդություն, վաճառականություն, բանվորական խավ։ Նա ներկայացնում է հիմնականում բուրժուական հասարակությունը, որտեղ սերը դեպի ոսկին ջնջել էր ամեն ինչ, որտեղ մարդիկ տարված էին միայն կուտակելու մոլուցքով, դժվար է տարբերել բարոյականը անբարոյականից, ազնիվը՝ անազնիվից. միջավայրը արտաքուստ փայլուն էր, ներքուստ ապականված և փչացած։ Շիրվանզադեն ներկայացրել է հիմնականում բուրժուական խավը, նրան բնորոշ շահամոլությունն ու դաժան մրցավազքը, կապիտալի կուտակման մոլուցքը, այդ խավի ներկայացուցիչներից են վեպում Մարկոս Ալիմյանը, Մարութխանյանը, Սմբատ Ալիմյանը։ Պատկերում է ոսկի երիտասարդության ցոփ ու շվայտ կյանքը։ Պատկերում է բանվորների կյանքը և վիճակը հանքերում։

3.Մարկոս աղա Ալիմյանի՝ քաղաքի մեծահարուստի թողած կտակը դառնում է երկու եղբայրների միջև բախման, և հետագա գործողությունները ծավալվում են հիմնականում այդ կտակի շուրջ։ Կտակով Ալիմյանի ամբողջ հարստությունն անցնում էր Սմբատին, Միքայելն և Արշակը իրենց մասը կստանային միայն այն դեպքում, եթե թողնեին իրենց շվայտ և անբարո կյանքը։

4. Պետք է իմանա, որ Սմբատի և Ալիմյանի միջև բախումը ավելի է խորանում, երբ Մարութխանյանը և Միքայելը ստեղծում են կեղծ կոնտր-կտակ։ Սմբատը չի հավատում այդ կտակի իսկությանը, հրաժարվում է վճարելուց։ Երկու եղբայրների միջև այս բախումը նաև ունի այլ պատճառ. Շուշանիկի նկատմամբ երկու եղբայրներն էլ զգացմունքներ ունեին։ Շուշանիկի բարոյական ապտակից հետո Միքայելը սկսում է անդրադարձ կատարել իր կյանքին, գիտակցում է այն ամբողջ ապականությունն ու դատարկ վատնումը։ Նա սկսում է հետզհետե հրաժարվել իր նախկին կենսակերպից և վերափոխվում է։ Վեպի բախումը լուծվում է հրդեհի տեսարանից հետո. եղբայրները հաշտվում են, Միքայելը ամուսնանում է՝ կատարելով հոր կամքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պատմել, ներկայացնել վեպի հղացման պատմությունը հակիրճ /2-3 նախադասությամբ/։

2. Ներկայացնել Բաքուն՝ իր նավթաարդյունաբերությամբ, վեպում պատկերված խավերի բնութագիրը հակիրճ։

3.Վեպի հանգույցը՝ կտակը, հակիրճ ներկայացնի դրա բովանդակությունը, ցույց տալ, թե կտակը ինչպե՞ս դարձավ դեպքերի զարգացման հիմք։

4.Վերապատմել և մեկնաբանել երկու եղբայրների միջև ծագած կոնֆլիկտի պատճառները, ներկայացնել վեպի հանգուցալուծումը։ (Ուսուցչի ընտրությամբ մի քանի հատված կարդալ կամ դիտել ֆիլմը, որը որոշակի պատկերացում կազմի վեպի սյուժեի մասին)

Դաս 65.Շիրվանզադեի «Քառս» վեպի կերպարները Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ էր Մարկոս աղա Ալիմյանը, և ինչպե՞ս է նա մասնակցում վեպի հետագա գործողություններին:

2. Ո՞վ էր Սմբատ Ալիմյանը. ինչպե՞ս է նրա կերպարը զարգանում, փոփոխություն կրում վեպում:

3. Ո՞վ էր Միքայել Ալիմյանը. ինչպե՞ս է նրա կերպարը զարգանում, ինչքանո՞վ էր նրա փոփոխությունը համոզիչ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարկոս աղա Ալիմյանը անցել էր բարդ ճանապարհ՝ հասարակ գյուղացուց դառնալով քաղաքի մեծահարուստ հանքատերերից մեկը: Մարկոս Ալիմյանի մասին քաղաքում միֆեր էին պատմում, որոնք հիմնականում կույր նախանձից էին ստեղծվում: Մարկոս աղան իր բնատուր խելքով և ճարպկությամբ ստեղծել էր իր ողջ հարստությունը և չէր ցանկանում, որ իր մահվանից հետո որդիները վատնեն իր կարողությունը: Չնայած վեպի սկզբում նա մահանում է, բայց իր թողած կտակով մասնակցում է վեպի գործողություններին: Նա շատ ավանդապաշտ էր, նրա նահապետական պատկերացումները շատ հաճախ չէին համապատասխանում ժամանակակից պատկերացումներին:

2. Սմբատ Ալիմյանը Մարկոս աղայի ավագ որդին է, որին հայրն ուղարկել էր Մոսկվա՝ կրթություն ստանալու: Սմբատն այնտեղ ազատամտական գաղափարներով է տարվում, մեղադրում հորը անազնիվ ճանապարհով հարստանալու համար, ի հեճուկս հոր և ընտանիքի կամքի ամուսնանում է ռուս կնոջ հետ. այդ պատճառով հայրը անիծում է նրան, զրկում ժառանգությունից: Հոր թողած կտակով Սմբատը դառնում է Մարկոս աղայի ողջ հարստության ժառանգորդը և տնօրինողը, բայց պայմանով, որ բաժանվեր ռուս կնոջին, ամուսնանար հայ աղջկա հետ: Այս հանգամանքը պատճառ է դառնում Սմբատի կյանքում շրջադարձային փոփոխության. նա սկսում է հարմարվել այն դիրքին ու միջավայրին, որ մի ժամանակ ինքը քննադատել և մերժել էր: Փողը և իշխանությունը նրա մեջ շատ բան են փոխում. նա վեպի վերջում դառնում է հոր նման **«խիղճը երկաթե սնդուկին հանձնած և հոգին գրպանը դրած»** բուրժուա:

3. Միքայելը Ալիմյանի միջնեկ որդին էր, որին հայրը կրթվելու չէր ուղարկել՝ աչքի առաջ ունենալով Սմբատի ճակատագիրը: Միքայելը չհամակերպվեց հոր կտակի հետ և ամեն քայլի պատրաստ էր՝ այդ ժառանգությունը ստանալու համար: Նա ոսկի

երիտասարդության ներկայացուցիչ էր, նրա համար կյանքը վայելք էր և հրճվանք։ օրերը վատնում էր թղթախաղի, ցոփ և անառակ խնջույքներում։Բեկումնային եղավ նրա հանդիպումը Շուշանիկի հետ, որի արհամարհանքը և բարոյական ազդեցությունը կարողացան Միքայելին վերափոխել. սիրո շնորհիվ նա գիտակցեց իր սխալները, հետ դարձավ այդ կործանարար ճանապարհից և դարձավ օրինավոր և բարոյական մարդ. ամուսնացավ Շուշանիկի հետ, հաշտվեց Սմբատի հետ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Վերապատմել վեպի սկիզբը՝ Մարկոս աղայի մասին պատմող հատվածը բնագրից /1-2 էջ/, ներկայացնել և մեկնաբանել Մարկոս աղայի մասին պատմվող լեգենդները, սեփական դատողությունն անել, թե Մարկոս Ալիմյանի մասին պատմվող միֆերից որն է ճշմարիտ, որը՝ հորինվածք։

2. Ներկայացնել Սմբատի կյանքի հիմնական փուլերը՝ Մոսկվայում սովորելու տարիները, Բաքու վերադառնալը և կտակի միակ ժառանգորդ դառնալը, վեպի վերջում նրա կերպարի փոփոխությունը։

3. Ներկայացնել Միքայելի կյանքի փուլերը՝ ոսկի երիտասարդության ներկայացուցիչ, Սմբատի հետ բախումը, Շուշանիկի հետ հանդիպումը և բարոյական վերափոխումը։

Դաս 66.Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի սյուժեն և գաղափարը

Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ է դրաման, ի՞նչ հատկանիշներ ունի։

2. Ո՞րն է դրամայի գործողությունների զարգացման հանգույցը։

3. Ո՞ւմ միջև է տեղի ունենում բախումը՝ կոնֆլիկտը։

4. Ինչպե՞ս է հանգուցալուծվում բախումը։

5. Ո՞րն է դրամայի գաղափարը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դրաման դրամատիկական ստեղծագործություն է, գրվում է բեմադրվելու համար, հեղինակային խոսքը գրեթե բացակայում է, կերպարների երկխոսություններով է սյուժեն զարգանում։

2. Դրամայի գործողությունների զարգացումը սկսվում է Արտաշես Օթարյանի հոր թողած փաստաթղթերից, որոնք բացահայտում են Անդրեաս Էլիզբարյանի՝ քաղաքի մեծահարուստներից մեկի խարդախությունը և գողությունը։ Արտաշես Օթարյանը, որի հորը խաբել և կողոպտել էր Անդրեաս Էլիզբարյանը, և հիմա այդ փաստաթղթերի միջոցով Օթարյանը ուզում էր հաստատել արդարությունը։

3. Բախումը տեղի է ունենում Արտաշես Օթարյանի և Անդրեաս Էլիզբարյանի միջև. Անդրեաս Էլիզբարյանը ամեն գնով փորձում է կաշառել Օթարյանին, որ նա չհրապարակի այդ փաստաթղթերը, չարատավորվի իր պատիվը քաղաքում։

4. Անդրեաս Էլիզբարյանի աղջիկը՝ Մարգարիտը, և Արտաշես Օթարյանը սիրում են իրար. Մարգարիտը պահանջում է, որ Օթարյանը ապացուցի հոր մեղքը։ Օթարյանը այդ փաստաթղթերը վստահում է Մարգարիտին, իսկ Անդրեասը հափշտակում է այդ թղթերը՝ փրկելով իր պատիվը։ Մարգարիտը, իմանալով այդ, ինքնասպան է լինում։

5. Այս դրամայում ներկայացված իրականությունը և միջավայրը նույնն է, ինչ «Քառս» վեպում.դրամայում բացահայտվում է մեծահարուստների միջավայրը, այնտեղ տիրող բարքերը, բարոյական արժեքների բացակայությունը, պատվի ընկալումը կարևորվում էր փողի և իշխանության սահմաններում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընդհանուր գծերով ներկայացնել դրամայի հատկանիշները։

2. Հաջորդաբար ներկայացնել դրամայի գործողությունները, մեկնաբանի, թե ինչ նշանակություն ունեին Օթարյանի ներկայացված փաստաթղթերը։

3.Պատմել և բացահայտել Օթարյանի և Էլիզբարյանի բախման պատճառները (2-3 նախադասությամբ)։

4. Ներկայացնել Մարգարիտի և հոր, Մարգարիտի և Օթարյանի հարաբերությունները։ Փորձի ցույց տալ, թե յուրաքանչյուրին ինչն էր դրդում այս կամ այն քայլի։

5. Հակիրճ մեկնաբանել դրամայի ասելիքը և համեմատել Շիրվանզադեի «Քառս» վեպի հետ, գտնել 1-2 նմանություն կամ տարբերություն։

Դաս 67.Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի կերպարները

Թեմատիկ-8

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞վ էր Անդրեաս Էլիզբարյանը,ինչպե՞ս է փորձում փրկել իր պատիվը։

2. Ո՞վ էր Արտաշես Օթարյանը, ինչպե՞ս էր ուզում վերականգնել իր և իր ընտանիքի ոտնահարված պատիվը։

3. Ո՞վ էր Մարգարիտը. ի՞նչ ծանր դրամա էր կատարվում նրա հոգում։

4. Ինչպիսի՞ն էր պատվի ընկալումը Էլիզբարյանի ընտանիքի անդամների համար։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անդրեաս Էլիզբարյանը քաղաքի խոշոր հանքատերերից մեկն էր, որ իր հարստությունը դիզել էր անազնիվ ճանապարհով՝ խաբելով ընկերոջը՝ Օթարյանի հորը։ Նա քաղաքում պատվավոր մարդու և բարեգործի համբավ ուներ և վախենում էր, որ Օթարյանի ներկայացրած փաստաթղթերով կբացահայտվի իր անազնվությունը և անպատիվ կդառնա հասարակության աչքում։ Նա ամեն քայլի պատրաստ էր հանուն իր փողի և պատվի՝ անգամ աղջկա երջանկությունը կործանելով։ Նա գողանում և ոչնչացնում է այդ փաստաթղթերը, բայց հոգեկան ծանր հարված է ստանում. Մարգարիտը ինքնասպան է լինում՝ դատապարտելով հորը տանջանքների։

2. Արտաշես Օթարյանը Էլիզբարյանի այն ընկերոջ որդին էր, ում խաբել և հարստահարել էր Էլիզբարյանը։ Երկար ժամանակԱրտաշեսը չէր իմացել, որ Էլիզբարյանի հարստության կեսը պատկանում է իր հորը։ Կրթություն ստանալուց հետո նա բացահայտում է այդ փաստաթղթերը և ցանկանում վերականգնել իր պատիվը, ցույց տալ Էլիզբարյանի իրական դեմքը։ Օթարյանը, սակայն, ծանր երկընտրանքի առաջ էր. նա սիրում էր Մարգարիտին և հավատում և վստահում էր նրան։

3. Մարգարիտը Անդրեաս Էլիզբարյանի աղջիկն էր. նա տարբերվում էր այդ միջավայրից։ Մարգարիտը ազնիվ և համեստ էր, անկեղծորեն սիրում էր հորը, հավատում, որ նա արդար և ազնիվ է իր գործերում։ Մարգարիտի համար ծանր հարված էր հոր ստոր քայլերի բացահայտումը։ Մարգարիտի համար դժվար էր ընտրություն կատարել հոր և սիրած տղամարդու միջև.նրա համար թանկ էր ճշմարտությունը։ Դրամայի վերջում Մարգարիտը ինքնասպան է լինում։

4.Էլիզբարյանի զավակները, բացի Մարգարիտից, բուրժուական միջավայրի տիպիկ ներկայացուցիչներ էին։ Նրանց համար հոր հարստությունը ավելի կարևոր էր, քան ազնվությունը և պատիվը։ Սուրենը՝ կրտսեր որդին, ոսկի երիտասարդության ներկայացուցիչ է, անկեղծ ցինիզմով նա դատապարտում էր հորը, բայց միաժամանակ վատնում նրա փողերը։ Ավագ որդին՝ Բագրատը, նոր բուրժուայի կերպար է, սառնասիրտ, հաշվարկված քայլերով գործարար, որը կապիտալը շարժման մեջ էր դնում և երազում էր դառնալ հզոր ֆինանսական սյուն։ Նա ոչ միայն չէր դատապարտում հորը, այլև արդարացնում էր նրան։ Ռոզալիան՝ Էլիզբարյանի ավագ դուստրը, պճնամոլ և ցուցամոլ աղջիկ էր, նա վատնում էր հոր փողերը թանկարժեք հագուստի և արդուզարդի վրա։ Նրան նույնպես չէին հետաքրքրում բարոյական բարձր արժեքները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ներկայացնել Էլիզբարյանի կերպարի հիմնական գծերը, բացատրել նրա քայլերը, արտահայտել սեփական կարծիքը կերպարի՝ պատվի ընկալման վերաբերյալ։

2. Բացատրել Օթարյանի քայլերի պատճառները, ներկայացնել նրա հոգեկան ներքին պայքարը։

3. Ներկայացնել Մարգարիտին բնորոշ հատկանիշները, մեկնաբանել, թե ինչ դժվար երկընտրանքի առաջ էր նա, ինչու գնաց այդ ծայրահեղ քայլին։

4. Ցույց տալ Էլիզբարյանի ընտանիքի մթնոլորտը, արժեհամակարգը, մեկնաբանել, թե յուրաքանչյուրի համար ինչ է պատիվը։ Կարողանալ 1-2 նմանություն կամ տարբերություն ցույց տալՇիրվանզադեի «Քառս» վեպի կերպարների հետ։